

Դ. ԿԵՍՍԵԼ

ՅԻԿԼ

ԿՈՒՆՏ ՔԱՂԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1933

ՀԱՍԽ-Ի

ՅԵՐԵՎԱՆ

23 JAN 2018


Դ. ԿԵՍՍԵԼ

ՊՐՈԳՆՈԶԻՐՄԱՆ ՀԵՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆՏԵՐԻ

Ց Ի Կ Լ

ԿՈՒԼՏ ՔԱՂԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. ՏՈԿԱՐԵՎԻ Խմբագրությամբ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԻ-Ի

1933

ՅԵՐԵՎԱՆ

112

Պետհրատի տպարան
Պլավինա 7416 (Բ)
պատվ. 3293
թիվ. 1000



1-34389

Կուլտուրայի յեվ կուլտուրական հեղափոխության Լենինյան ուսմունքը:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս դասի նպատակն է.

ա) Կուլտուրաներին ծանոթացնել կուլտուրայի և կուլտուրական հեղափոխության Լենինյան ուսմունքի հիմնական մոմենտներին, այն նշանակությանը, վոր ունի կուլտուրական հեղափոխությունը սոցիալիստական հասարակարգի կառուցման խնդիրներն իրագործելու համար, և այն դերին, վոր ունի պրոլետարատը վորպես կուլտուրական հեղափոխության ղեկավար:

բ) Ցույց տալ, վոր կուլտուրական հեղափոխության ծավալումը և այդ ճանապարհին ձեռք բերված հաջողությունները պայմանավորված են այն բանով, վոր կուլտուրական անդեղ կենսագործեց Լենինյան դիրքավորումը կուլտուրական շինարարության հարցերում և անհաշտ պայքար մղեց թեքումների դեմ կուլտուրայի բնագավառում, պայքար մղեց յերկու ֆրոնտի վրա:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ

I. Կուլտուրայի դասակարգային բնույթի մասին

Ի՞նչ է կուլտուրան:

Կուլտուրայի կախումն եկոնոմիկայից և կուլտուրայի ազդեցությունը եկոնոմիկայի վրա:

Իզեալիստական սխառեմները բուրժուական հասարակարգի դասակարգային կուլտուրայի հիմքն են:

Բուրժուական կուլտուրայի ոգտագործումը բուրժուազիայի տիրապետութեան ամրացման համար:

II. Պրոլետարական կուլտուրան անցման օրշաճի կուլտուրա յե

Պրոլետարական կուլտուրայի տարրերը բուրժուական հասարակարգում:

Պրոլետարիատի կուլտուրականութիւնը և սոցիալիստական հեղափոխութեան կախումը դրանից:

Պրոլետարական կուլտուրայի ելութիւնը և նրա կապը բուրժուազիայի դասակարգային կուլտուրայի հետ:

Կուլտուրական հեղափոխութիւնը և դասակարգային պայքարը:

III. Յերկու Ֆրոնտով պայքար կուլտուրայի հարցերում

Ինչպէս են կայանում աջ և «ձախ» թեքումները կուլտուրայի հարցերում:

Պրոլետկուլտի տեսակետը պրոլետարական կուլտուրայի մասին:

Սոցիալիստական կուլտուրայի կոդիմակիցների սլախանքը:

Տրոցկու տեսակետը անցման շրջանի կուլտուրայի հարցերի մասին:

Պրոֆմիութիւնների կուլտաշխատանքի պրակտիկայում յեղած սխալների կապը այն դիրքավորումների հետ, վոր ունեն պրոֆմիութիւնական ոպորտունիստական ղեկավարութիւնը կուլտուրայի հարցերում:

IV. Լեհիցի յեվ Սալիցի ուսմունքը ազգային-կուլտուրական շինարարության մասին

Ազգային կուլտուրայի լոզունգը բուրժուազիայի տիրապետութեան պայմաններում և պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ:

Կուսակցութեան կարևորագոյն միջոցառումները ազգային կուլտուրական շինարարութեան բնագավառում:

Ազգային կուլտուրայի բնույթը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ:

Թեքումները ազգային—կուլտուրական շինարարութեան մեջ:

I. ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

«Կուլտուրա» բառին մենք վոր միշտ միևնույն նշանակութիւնն ենք տալիս: Այսպես, համեմատելով Գերմանիան Պարսկաստանի հետ, մենք պնդում ենք, վոր Գերմանիան ավելի կուլտուրական է, քան Պարսկաստանը: Ընդվորում մենք նկատի ունենք, վոր Գերմանիայում ավելի շատ գործարաններ, հանքեր և յերկաթուղիներ կան, ավելի յե զարգացած տեխնիկան, հողն ավելի լավ է մշակվում, գրագիտութեան տոկոսն ավելի բարձր է, գրականութեանն ու արվեստը ավելի բարձր մակարդակի յեն կայլն կայլն: Իսկ յերբ մենք խոսում ենք կուլտուրայի մասին Լուստոկոմատի ու նրա որդանների կամ պրոֆմիութիւնների գործունեյութեան առումով, ապա այս տեղ արդեն խոսքը չի վերաբերում մեքենաներին, գործարաննե-

րին, տներին և այլն, այլ միայն զրազխտութեանը, գիտութեանը, արվեստին, կենցաղին և այլն: Ակնհայտ է, վոր առաջին դեպքում մենք կուլտուրայի մասին խոսում ենք ավելի լայն իմաստով, քան լերկրորդ դեպքում: Ընկ. Պոկրովսկին իր «Ռուսական կուլտուրայի պատմության ուրվագիծ» գրքում, կուլտուրայի հասկացողության հետևեալ բնորոշումն է տալիս: «Այն ամենն, ինչ մարդկային աշխատանքի արդյունք է լայն իմաստով, կարող է կուլտուրա համարվել. ուրեմն, վերջինս կարելի է բնորոշել իբրև ամբողջութունն այն ամենի, ինչ ստեղծած է մարդու աշխատանքով, ի հակադրութուն այն ամենի, ինչ ձրի և առանց աշխատանքի մեզ տալիս է բնութայունը»:

Լայն իմաստով կուլտուրայի հասկացողութեան բովանդակութունը կարելի չի հիմնականում բաժանել լերկու մասի — «Նյութական կուլտուրա» և «Հոգեվոր կուլտուրա»¹⁾: Նյութական կուլտուրա ասելով մենք հասկանում ենք այն ամենն, ինչ ստեղծել է մարդկութունը արտադրության և կենցաղի համար, անհրաժեշտ իրերի, առարկաների, գործիքների ձևով իսկ հոգեվոր կուլտուրայի հասկացողութունն իր մեջ պարունակում է մարդկության կուլտակած բոլոր գիտելիքները, կազմակերպված կենցաղային ձևերը, աշխարհայեցողութունը: Յերբ մենք խոսում ենք կուլտուրայի մասին, այնտեղ հասկանալով զրազխտութունը, դպրոցը, գիտութունը, գրականութունը, արվեստը, կենցաղային ձևերը, մենք, հետևապես, խո-

1 Այս բաժանումը խիստ պայմանական է: Իդեալականը վոչ այլ ինչ է, ինքն վոչ նյութականը՝ փոխադրված է մշակված մարդկային ուղեղում: (Մարքս)

սում ենք միայն հոգեվոր կուլտուրայի մասին, այսինքն՝ նեղ իմաստով կուլտուրայի մասին: Սակայն սրանից չի կարելի այն լեզրահացողութունն անել, թե հոգեվոր կուլտուրայի հասկացողութունը նյութական տարրեր չի պարունակում, այդ սխալ կլիներ: Խոսելով կուլտուրայի և կուլտուրական հեղափոխության մասին, մենք նկատի ունինք վոչ միայն գիտութունը, արվեստը և այլն և այլն, այլև այնպիսի նյութական տարրերը, ինչպես դպրոցական հիմնարկությունները, ակումբները, գրադարանները և այլն: Նմանապես չի կարելի հավասարութեան նշան դնել իդեոլոգիա և կուլտուրա հասկացողութունների միջև: Իդեոլոգիան կուլտուրայի հիմնական մասն է կազմում, բայց չի սպասում ամբողջ կուլտուրա հասկացողութունը:

Հոգեվոր կուլտուրան անխզելի կապերով կապված է նյութական կուլտուրայի հետ և նրանից անմիջական կախում ունի. «Նյութական կյանքի արտադրության լեզանակը պայմանավորում է սոցիալական, քաղաքական և ընդհանրապես հոգեվոր կյանքի պրոցեսը: Վոչ թե մարդկանց գիտակցութունն է վորոշում նրանց կենցաղը, այլ, ընդհակառակը, նրանց հասարակական կեցողութունն է վորոշում նրանց գիտակցութունը» (Մարքս):

Ինչքանով վոր մարդկային հասարակութունը բարելավում էր աշխատանքի գործիքները և բարձրացնում աշխատանքի արտադրողականութունը, այնքան զարգանում էր նրա կուլտուրան, հարստանում էր լեզուն, յիբրևն երգելիս արվեստը, փոխվում էլին կենցաղային ձևերը, զարգանում էլին գիտությունները: Այն ամենն ինչ մենք կոչում ենք հոգեվոր կուլտուրան,

իր ծագումով պայմանավորված և արտադրության պահանջներով, նյութական կյանքի պարագաններով: Յերգը նույնպես նախնադարյան մարդկանց մոտ ծագել և համատեղ աշխատանքի պայմաններից, ինչպես և աստղաբաշխությունը հին Յեգիպտոսում՝ հողագործության պահանջներից, վորը կախված եր Նեգոսի մակընթացությունից, նրա վեբի աղունքներում տեղացող անձրևներից կային:

Այս դրույթը ճիշտ և վոչ միայն նախադարյան հասարակության կամ հին պատմության շրջանի վերաբերմամբ: Ինչքան վոր փորձ եր կուտակվում, ինչքան վոր բարդանում ելին արտադրության յեղանակները, այնքան ավելի բարդ ու բազմակողմանի յեր դառնում նաև հասարակության կուլտուրան:

Սակայն սխալկլինեք խիստ գոհիկ իմաստով հասկանալ լայն կախումը, վոր ունի կուլտուրան արտադրության յեղանակից: Յեթե կուլտուրայի զարգացումը մարդկանց նյութական կյանքի փոփոխության արդյունք և հանդիսանում, ապա կուլտուրան իր հերթին նույնպես հակադարձ ազդեցություն և գործում նյութական կյանքի զարգացման վրա: Լեզուն ծնունդ և առել մարդկանց համագործակցության հետևանքով, բայց և նա իր հերթին հսկայական ազդեցություն և գործում համագործակցության բարելավման վրա. շոգենքենան հանդես յեկավ այն բանի հետևանքով, վոր մանուֆակտուրային արտադրությունը չեք կարողանում բավարարել ապրանքի աճող պահանջը, դրա հետ միասին շոգենքենայի գյուղը հսկայական նշանակություն ունեցավ արդյունաբերության հետագա զարգացման համար: Այսպիսով, դոյություն ունի վոչ

միայն կուլտուրայի կախումը նյութական կյանքից, այլև կուլտուրայի հակադարձ ներգործությունը արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների վրա, և այդ փոխազդեցությունը կուլտուրայի և նյութական կյանքի միջև, հատուկ նշանակություն և տալիս կուլտուրայի հարցերին:

Այս փոխազդեցության նշանակությունը սպառիչ կերպով ցույց և արված Լենինի և Ստալինի կողմից: Կուսակցության XI համագումարում Լենինը հետևեալ կերպ եր դնում կուլտուրայի հարցը. «Ինչի մեջ և մեր ուժը և ի՞նչ և մեզ պակասում: Քաղաքական իշխանությունը միանգամայն բավարար ե... Հիմնական տնտեսական ուժը—բուրժուական խոշոր ձեռնարկությունները, յերկաթուղիները կային,— մեր ձեռքում ե... Տնտեսական ուժը Ռուսաստանի պրոլետարական պետության ձեռքում բավարար և ապահովելու համար անցումը դեպի կոմունիզմ: Իսկ ի՞նչ և պակասում: Պարզ բան և, թե ի՞նչ և պակասում: Պակասում և կուլտուրականությունը կոմունիստների այն խավի մոտ, վորը կառավարում ե» (Յերկ. Ժողով. XVIII հատ. II մաս, եջ 39):

Իսկ տասը տարուց հետո, յերբ մենք արդեն իսկ ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, ընկ. Ստալինը, սոցիալիստական արդյունաբերության աշխատողների I համամիութենական կոնֆերանսում ամփոփելով 1930 թ. տնտեսական պլանի կատարման արդյունքները, հետևեալ կերպ և դնում հարցը. «Անցյալ տարի մենք ունեյինք արդյոք «որչեկավ» հնարավորություններ պլանի լրիվ կատարման համար: Այո, ունեյինք: Անվիճելի փաս-

տերն այդ են վկայում... Իսկ ինչո՞ւ, հարց ե ծագում, մենք չկատերեցինք ամբողջ տարվա պլանը: Ի՞նչն եր խանգարում: Ի՞նչն եր պակասում, Պակասում եր յեղած հնարավորություններն եզրագործելու կարողությունը, պակասում եր գործադրանքներն ու հանգեքը հի՞ս գեկավարելու կարողությունը» (Ընդգծումը հեղինակինն է):

Լենինի և Ստալինի այս խոսքերը մեզ բացատրում են կուլտուրայի ու նյութական կյանքի փոխադրեցությունն նշանակությունը և ամբողջ սրությունն առաջադրում են կուլտուրական հետաքննության հաղթահարման խնդիրը:

Կուլտուրայի զարգացումը, ինչպես և արտադրողական ուժերի զարգացումը, յերկարաակ պրոցեսն ե «Պատմությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ առանձին սերունդների հետևողական փոխարինումը, սերունդներ, վորոնցից յուրաքանչյուրը շահագործում է նախորդից իրեն փոխանցված նյութերը, կապիտալները, արտադրողական ուժերը»: (Маркс и Энгельс о Фейербахе, Архив, кн. I, стр. 225): Բնական է, վոր հաջորդող սերունդները իրենց նախորդներից փոխկառնեն նաև այն կուլտուրան, վորը հիմնականում համապատասխանում է փոխ առած «նյութերին, կապիտալներին և արտադրողական ուժերին»: Ընդվորում ստացված ժառանգությունն ինչպես նյութական ուժերի բնագավառում, այնպես ել կուլտուրայի բնագավառում յենթարկվում է հետագա փոփոխության՝ աղվյալ հասարակության գործունեության պրոցեսում: Այսպես աստիճանաբար կատարվում են համամարդկային նշանակություն ունեցող նյութական և կուլտուրական արժեքները:

Հարց ե ծագում, յեթե կուլտակված կուլտուրական արժեքները համամարդկային նշանակություն ունեն, ապա ինչո՞ւ մենք շարունակ խոսում ենք կուլտուրայի դասակարգային լինելի մասին: Մենք վերևում արդեն խոսեցինք այն կախման մասին, վոր ունի կուլտուրան արտադրողական ուժերից և արտադրողական հարաբերություններ, իսկ քաղաքագիտությունն անցնող յուրաքանչյուր բանվորը գիտե, վոր բուժական հասարակությունը (և նրան նախորդող հասարակությունները) կառուցված է մասնավոր սեփականության ըսկզբունքով և վոր այդ հասարակության հիմնական դասակարգերի (բուրժուազիայի և պրոլետարիատի) միջև գոյացել են այնպիսի հարաբերություններ, վոր փոքրամասնությունը (բուրժուական դասակարգը) արտադրության միջոցների տեր է հանդիսանում, իսկ մեծագրության միջոցների տեր է հանդիսանում, իսկ «այն դասակարգը, բական ուժի սեփականատեր է, իսկ «այն դասակարգը, բական ուժի սեփականատեր է, իսկ «այն դասակարգը, վոր անորինում է նյութական արտադրության միջոցները, դրա շնորհիվ միաժամանակ իր արամադրունքները, այնպես վոր դրա շնորհիվ նա միաժամանակ տիրում է ընդհանուր առմամբ նրանց մաքերի վրա, ովքեր հոգևոր արտադրություն չունին» (Маркс и Энгельс о Л. Фейербахе, Архив, кн. I):

Բուրժուական կուլտուրան շարունակությունն ու զարգացումն է այն հարստացումն փորձի, վորը կուլտակել է մարդկությունն իր ամբողջ պատմության ընթացքում: Ուստի այդ կուլտուրայի մեջ ճշմարիտ և արժեքավոր շատ բան կա, վոր անպայման համամարդկային նշանակություն ունի և վորը մենք արդեն ու

տագործում ենք պրոլետարիատի դիկտատուրայի որոշ
ոսցիալիզմի կառուցման պայմաններում և շատ բանով
կոգտագործվի նաև կոմունիստական հասարակության
կողմից: Սակայն սրանով ամենևին չի թուլանում
բուրժուական կուլտուրայի դասակարգայնությունը:

Բուրժուական հասարակության կուլտուրայի դա-
սակարգային, առանձնահատկությունն է հանդիսանում
նրա իդեալիզմը: Բուրժուական հասարակությունը,
վոր կառուցված է մասնավոր սեփականություն վրա,
աշխատավոր մարդկության վիթխարի մեծավասնու-
թյան շահագործման վրա, իր բնույթով թշնամի յև
դիալեկտիկական մատերիալիզմին, վորը բաց է անում
մարդկանց վորոշ հարաբերություններին ծագման պատ-
ճառները արտադրության պրոցեսում (արտադրական
չարաբերություններ), այդ հարաբերությունների փո-
փոխման պատճառները: Տիրապետող դասակարգը շա-
հագործված է իր տիրապետությունն ամրացնելու խըն-
դրով, դրա համար էլ նա ստեղծում և մարդկանց ու-
ղեղում պահպանում է այդ տիրապետության որինա-
կանություն և հավերժականության պատկերացումը:
Այդ պատճառով բուրժուական դիտությունը, իրա-
վունքը, բարոյականությունը բնություն և հասարա-
կության բոլոր կարևորագույն լերևույթները ձգտում
են բացատրել վոչ թե նյութական ուժերի գործողու-
թյամբ, այլ ամեն ինչի վրա տիրապետող այն իդեալի-
ազդեցությունը, վորը բարոյական ուժերից կախում
չունի, այլ գտնվում են նրանցից վեր: Այդ իդեան ընդու-
նում է տարբեր տեսակներ—վորի, աստված, բարձրա-
գույն իդեա, գիտակցություն,— և գուրս է այն ամե-
նից, ինչ մարդն ի վիճակի է իմանալ:

«Իդեալի» ոգնությունը դժվար չէ արդարացնել և
ապացուցել իրերի այնպիսի մի կարգի հավերժակա-
նությունը, վորտեղ վոմանք պեաք ամբողջ կյանքի
ընթացքում աշխատեն ու քաղցած մնան, իսկ մյուս-
ներն ողտվեն նրանց աշխատանքի արդյունքներով:
Այս լերկրում սովահար կյանք վարելուն ի վարձա-
տություն, «իդեալի» վորու և աստծու շնորհիվ ու նը
բանց ոգնությունը պատկերացում է ստեղծվում հանդեր-
ձյալ կյանքի մասին, ուր բոլոր բարիքները խոստաց-
ված են հենց աղքատներին, քաղցածներին, ընկճված-
ներին, բաց «ազնիվներին» — (այսինքն նրանց, վո-
րոնք անտրտուն չաշխատում են շահագործողների հա-
մար):

Լենինը «Կրոն և Սոցիալիզմը» հոդվածում ասում է,
վոր, «շահագործող դասակարգերի անգործությունը
շահագործողների դեմ մղվող պայքարում, անխուսափե-
լիորեն ծնունդ է տալիս հանդերձյալ կյանքի հավատին,
ճիշտ այնպես, ինչպես շահագործող դասակարգերի
անգործությունը շահագործողների դեմ մղվող պայքա-
րում՝ աստանաների, հրաշքների և այլ բաների հավա-
տին»:

Հանդերձյալ կյանքի, աստծու, մեղքերի համար պա-
տժվելու, «ազնիվ» աշխատանքային կյանքի համար
վարձատրվելու հավատքը միայն կրոնի կողմից չէ, վոր
քարոզվում է, կրոն, վորը Լենինը թույն է անվանում
ժողովրդի համար: Բուրժուական դասակարգային գի-
տությունը, փիլիսոփայությունը, իրավունքը, բարո-
յականությունը, արվեստը նույնպես, ինչպես կրոնը,
միայն թե ավելի բարդ, ավելի վարագուրված ձևով
ամեն ինչ, վերջին հաշվով, կապում են «իդեալի» տի-

րապետութեանը և թղթակցութեան, կրօնի հետ միասին, ձգտում են ամբողջական իդեալիստական աշխարհայեցողութեան պատվաստել մասսաներին: Հենց այդ իդեալիզմն է, վոր կոչվում է բուրժուական հասարակութեան կուլտուրայի հիմնական դասակարգային բնույթը:

Միթե կարելի չէ այս դատողութեաններէց այն յեզրակացութեանն անել, թե բուրժուական դիտութիւնը, ինչքանով վորնա կառուցված է կեղծ իդեալիստական ֆունդամենտի վրա, վաղ մի արժեք չի ներկայացնում պրոլետարիատի համար: Այդպիսի յեզրակացութեանը սխալ կլինէր: Թեև բուրժուական գիտութեանը ոգնում է նախապատճառները բացատրել վուգու, աստծու գործողութեամբ և կամքով, բայց առանձին կոնկրետ յերևույթների ուսումնասիրութեան ժամանակ նա հենվում է փորձի, դիտողութեանների վրա, և այդ ուսումնասիրութեան արդեւնքները, պրակտիկացում ստուգվելով, կասկած չեն առաջացնում և անպայման արժեք են ներկայացնում նաև պրոլետարիատի համար:

Այս դատողութեանը կարելի է հաստատել որինակ բերելով տեխնիկական գիտելիքները, վորն ամբողջապես ստեղծել է բուրժուական գիտութեանը, ուսումնասիրելով կոնկրետ յերևույթները և ստուգելով փորձի հիման վրա: Բուրժուական տեխնիկայի հիմնական նշվածումները պրոլետարիատն ամբողջապես ոգտագործում է սոցիալիստական շինարարութեան մեջ:

Բուրժուական կուլտուրայի հիմքում դրված իդեալիստական սխտեմները տիրապետող դասակարգի՝ բուրժուազիայի համար ասպնդված են մեծագույն հնա-

րավորութեանը՝ դասակարգային կուլտուրան ոգտագործելու իբրև աշխատավորական մասսաներին տրեկացնելու և շահագործելու հզոր միջոց: Դասակարգային կուլտուրան ուժեղ գնքն դառնում տիրող դասակարգի ձեռքում:

Այն ուղիները, վորնց միջոցով բուրժուազիան հասնում է այդ նպատակին, զարմանալի բազմազան են: Բուրժուազիան սահմանափակում է գիտութեան մատչելիութեանը լայն մասսաների համար: Նա կրօնն ու փիլիսոփայութեանը, դպրոցն ու մամուլը, գրականութեանն ու արվեստը, մաթեմատիկան ու բնագիտութեանն ոգտագործում է այն բանի համար, վորպես մասսաներին պատվաստի այն աշխարհայեցողութեանը, վորը մասնավոր սեփականութեանը դիտում է իբրեւ արդարացի որեւք, շահագործման հարաբերութեաններն՝ իբրև հաբատի առաքինութեան, վորը չքավորին տալիս է սնունդ, վոմանց՝ հոգիանք, մշտուններին՝ սովահար գոյավիճակ, — և այդ ամենը դիտվում է վորպես բնական յերևույթ թե հասարակութեան և թե բնութեան մեջ: Այս ճանապարհներով բուրժուազիան հասնում է այն դրութեան, վորի մասին Մարքսը և Էնգելսը ասում են — «Տիրող դասակարգի մտքերը յուրաքանչյուր դարաշրջանում տիրապետող մտքեր են հանդիսանում, այսինքն՝ այն դասակարգը, վորը հասարակութեան տիրապետող նյութական ուժ է հանդիսանում, միաժամանակ հանդիսանում է նաև նրա տիրապետող հոգևոր ուժը» «Маркс и Энгельс о Л. Фейербахе»:

Իր հոգևոր տիրապետութեանը, այսինքն դասակարգային կուլտուրան իր նյութական տիրապետութեան

ամբացման հզորագրության դեմ զարմանալով, բուրժուա-
զիան դիմում է ֆալսիֆիկացիայի, սուտը ճշմարտու-
թյան տեղ է անցկացնում, այլանդակը պատկերա-
ցնում է վորպես գեղեցիկ, խեղաթյուրում է գիտու-
թյան չեզրակացությունները: Այս ամենը վորոշ չա-
փով բուրժուազիայի և նրա իդեոլոգներին—փիլիսոփա-
ներին, գիտնականներին, նկարիչներին, բանաստեղծներին,
մանկավարժներին և տեխնիկներին գիտակցական գոր-
ծողությունն է հանդիսանում: Իր տիրապետության
աղշալույսին, ֆիդոլալական հասարակության դեմ մը-
ղված պաշտարում, բուրժուազիան դեմ եր դուրս գալիս
կրոնին, վորովհետև չեկեղեցին պաշտպանում եր ֆեո-
դալական կարգերը: Ամբացնելով իր տիրապետու-
թյունը, բուրժուազիան թողություն տվեց չեկեղեցու
«ֆեոդալական» մեղքերին, չեկեղեցին իրեն սպասաը-
կու դարձրեց և ստեղծեց այն բոլոր անհրաժեշտ պայ-
մանները, վորոնք ապահովում են կրոնի տիրապետու-
թյունը շահագործվող մասաների մտքերի վրա: Մին-
չև իսկ մեծագույն գիտնականներն ի վիճակի չեյին
ազատագրվել բուրժուական կուլտուրայի գիտություն-
ներից և հրաժարվում եյին անել այն չեզրակացու-
թյուն-
ները, վորոնք նրանց հանդեպ եյին տալիս հենց իրենց
իսկ սեփական հեռագրությունները:

Այս տեսակետից անսովոր հետաքրքրություն է
ներկայացնում նշանավոր գիտնական Դարվինի՝ Մարք-
սին գրած նամակը: Ահա թե, ի միջի այլոց, ինչ եր
գրում Դարվինը.

«Բոլոր հարցերում վճռական կողմակից լինելով
մտքի ազատության, իս համեմատյան դեպս կարծում
եմ (ճիշտ լինի դա, թե սխալ, այդ միևնույն է),

վոր ուղիղ փաստարկումները քրիստոնեության և
աթեիզմի դեմ հազիվ թե վորևե տալավորությունն
են գործում հասարակության վրա և վոր մտքի ա-
զատությանը մեծագույն ոգուտ կրեբրի մտքերի
աստիճանական լուսավորումը, վորպիսին կլինի գի-
տության առաջադիմության հետևանքով: Այդ պատ-
ճառով յես միտ գիտկցաբար խուսափել եմ գրել կը-
րոնի մասին և սահմանափակվել եմ գիտության բը-
նագավառում: Սակայն հնարավոր է, վոր այդտեղ
ինձ վրա հարկ յեղածից ավելի ազդել է այն միտքը,
վոր յես ցավ կպատճառեյի իմ ընտանիքի մի քա-
նի անդամներին, չեթե այսպես թե այնպես աջակ-
ցիլ կրոնի դեմ ուղղված հարձակումներին»:

Այս նամակը հրատարակելով «Под знаменем
Марксизма» ժուռնալի 1931 թ. № 1-2ում: Մարքսի և
ենգելսի Ինստիտուտը նամակին կցած ծանոթության
մեջ ընդգծում է հետևյալ միտքը. «Դարվինի նամակն
ունի վոշ միայլի պատմական, այլ և ակաուալ—քաղա-
քական նշանակություն: Նա պրոլետարիատի հեղափո-
խական աշխարհայեցողությանը մի ավելորդ անդամ
փաստական վավերացում է տալիս այն դրուլթի վե-
րաբերյալ, վոր բուրժուազիայի գովաբանած «գիտու-
թյան ազատությունը» ֆիկցիա չե հանդիսանում: Նա
պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպես տիրող դա-
սակարգի իդեոլոգիան ճնշում է գիտական ստեղծա-
գործության վրա, ինչքան ուժեղ է գիտականների
վախը՝ կոնֆլիկտի մոտենլու բուրժուազիայի «հասարա-
կական կարծիք» հետ, վոր անդամ մտքի այնպիսի
գիգանդներ, ինչպես Դարվինը, վախենում են բաց ա-
նել իրենց իսկական, աթեիստական համոզմունքնե-
րը»:

1-34389

Այնուամենայնիվ, հակառակ Դարվինի ցանկության, նրա գիտական աշխատությունները հանդես են տալիս այնպիսի չեզոքակացությունների, վորոնց դեմ բուրժուազիան շարունակում է անխոնջ պայքարել: Յեվ առանձնապես հետաքրքիր է այն, վոր Դարվինի մահվանից շատ տարի անց արգեն իսկ 1925 թ. ամերիկական բուրժուազիան նշանավոր կապիալին դատավարության դիմակի ներքո դատ կազմակերպեց Դարվինի ուսմունքի դեմ:

Այն, վոր բուրժուազիան ստիպված է պատերազմ հայտարարել գիտության չեզոքակացությունների դեմ, ցույց է տալիս, վոր կապիտալիզմը կուլտուրայի բնագավառում կսփառվում է դեմ առ դեմ, վոր կապիտալիստական կարգերը խոչընդոտ են դարձել գիտության հետագա զարգացմանը, կուլտուրայի հետագա աճմանը: Այդ մասին վկայում է վոչ միայն Դարվինի ուսմունքի դատավարությունը ՀԱՄՆ-ում: Գիտության ասպարեզում տեղի է ունենում նույնը, ինչ վոր եկոնոմիկայում: Ամենախորը տնտեսական ճգնաժամի ֆոնի վրա նեխումը տեղի է ունենում նաև կուլտուրայի ասպարեզում: Խոշորագույն գիտնականները—ֆիզիկոսներ, աստղաբաշխներ, մաթեմատիկոսներ, բնագետներ—դառնալով պայքարի սրման ֆոնի վրա, սատանայություն, տերտերականություն մեջ են ընկնում, միատիկա, սպիրիտիզմ են քորոզում: Գիտությունը ֆաշիստականանում է: Իրենց տիրոջ հավատքերի սոցիալ—ֆաշիստները հնարում են «կուլտուրական դեմոկրատիա», վորը «քաղաքական դեմոկրատիայի» է «տնտեսական դեմոկրատիայի» հետ միասին տանում է դեպի «Սոցիալիզմի» գլխավոր ուղին (կապիտալիս-

տական հասարակության կուլտուրայի նեխման մասին ավելի մանրամասն կխոսվի յերկրորդ— «Կուլտուրական հեղափոխության պրոբլեմները նոր ետապում» — դասում):

Այն բոլոր միջոցառումները, վորոնց ոգնությունը բուրժուազիան կուլտուրայի նվաճումները ծառայեցնում է իր տիրապետությունն ամրացնելու գործին, բանվոր դասակարգին կրթություն տալով «միայն այնքան, վորքան այդ պահանջում են իր շահերը» (Ենգելս, «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում»), ամեն կերպ աջակցելով կրոնին, ամբապնդելով հարգանքը մասնավոր սեփականության նկատմամբ, վստահություն՝ բուրժուական կարգերի անխախտ լինելուն, հասարակության՝ հաբուստների և աղքատների բաժանման հավերժական լինելուն, զարգացնելով ազգային շովինիզմը,—այս բոլոր միջոցառումների ամբողջությունը հենց կազմում է բուրժուական հասարակության կուլտուրայի դասակարգային բնույթը:

II Պոլիտարական կուլտուրան անցման օրոյնի կուլտուրայի

Բուրժուազիայի հոգևոր տիրապետության մասին այս ամբողջ ասածից կարելի է և արդյոք այն չեզոքակացությունն անել, թե պոլիտարիատը կապիտալիստական հասարակության պայմաններում ամբողջապես գտնվում է բուրժուական կուլտուրայի իշխանության ներքո և այլ կուլտուրայի վրա մի տարր չի ստեղծում: Այդպիսի չեզոքակացությունը սխալ էլիներ: Դասակարգային պայքարի պրոցեսում պոլիտարիատն այնպիսի մտապատկերներ է ստեղծում, մշակում է այնպիսի

գիտակցութիւն, վոր զգալիորեն տարբերվում է բուրժուազիայի դասակարգային կուլտուրայից:

Այս միտքը մենք գտնում ենք Ենգելսի «Բանվոր դասակարգի դրութիւնը Անգլիայում» գրքում, վորը բնորոշում է Անգլիայի պրոլետարիատի դրութիւնը դեռևս XIX դարի առաջին կիսում. «Անգլիական բանվոր դասակարգը, — գրում է Ենգելսը — Ժամանակի ընթացքում բոլորովին այլ ժողովուրդ է դարձել, քան Անգլիական բուրժուազիան: Բուրժուազիան յերկրագնդի բոլոր միտակցութիւնների հետ ափսի մերձակից է, քան բանվորների, վորոնց հետ ապրում է կողք կողքի: Բանվորներն այլ բարբառով են խոսում, այլ իդեաներ ու մտապատկերներ, այլ բարքեր ու բարոյական սկզբունքներ, այլ կրոն ու քաղաքականութիւն ունին, քան բուրժուազիան»:

Տվյալ դեպքում վնասեալ նշանակութիւն ունի դեռևս այն հանգամանքը, վոր մի քանի ամենատալանավոր մարդիկ, բուրժուազիայից և մանր — բուրժուազիայից դուրս լեկաձներ, գիտական մեծ բարձրութեան հասնելով, բաց են անում կապիտալիստական հասարակութեան կոլեկտիւնը, պրոլետարիատի դերն ու նրա զարգացման ուղիները և դրանով իսկ ստեղծում են պրոլետարական շարժման գիտական ֆունդամենտ, բուրժուականից տարբեր մի նոր աշխարհայեցողութիւն: Այդպիսին է մարքսիզմը — հեղափոխական պրոլետարիատի իդեոլոգիան, ինչպես ասում եր Լենինը, — վորի հիմնադիրներն են հանդիսանում Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Ենգելսը:

Այդ, իհարկե, չի նշանակում, վոր բանվոր դասակարգը դեռևս կապիտալիզմի որոշ ազատագրվում է

բուրժուազիայի դասակարգային կուլտուրայի ազդեցութիւնից և ստեղծում է իր պրոլետարական կուլտուրան:

Այդ անհնար է, առաջին, նրա համար, վոր բուրժուազիայի ձեռքում են գտնվում հոգևոր արտադրութեան բոլոր միջոցները (գլխոցները, գրադարանները, տպարանները, թուղթը, թերթը, պալատները և այլն և այլն), վորոնց միջոցով բուրժուազիան իր ազդեցութիւնն է գործում աշխատավոր մասսաների վրա: Բավական է մատնանշել այնպիսի գործոններ, ինչպես կրոնը, վորի ազդեցութեան տակ են գտնվում հարյուր հազարավոր աշխատավորներ, ինչպես գլխոցը, վորը մարդկանց մեջ փոքր տարիքից սկսած մըտապատկեր է դարգացնում գոյութիւն ունեցող կարգերի անխախտ ու արդարացի լինելու մասին, հարգանք է ներշնչում տիրող դասակարգի նկատմամբ, ինչպես մամուլը, վորն որն որին, բանվորի և աշխատավորի ամբողջ կյանքի ընթացքում, կապկպում է նրա գիտակցութիւնը, հասարակական կյանքի բոլոր կողմերը լուսաբանելով տիրող դասակարգի շահերի տեսանկյան տակ: Յերկրորդ, պրոլետարիատին իր ազդեցութեան տակ պահելու համար բուրժուազիայի դասակարգային կուլտուրան ցուցաբերում է հարմարվելու մեծ ընդունակութիւն: Յերրորդ և Ամերիկայի մի շարք սոցիալ — ֆաշիստական կուսակցութիւններն ու ռեֆորմիստական պրոֆմիլիտիւններն շարքերում կան միլիոնավոր բանվորներ, վորոնց բուրժուազիան իր իդեոլոգիայի գերին է դարձնում հենց այդ կադմակերպութիւններն միջոցով:

Դասակարգային կուլտուրայի հարմարվելու ընդուն-

հակության ամենացայտուն որինակ և հանդիսանում
ժամանակակից սոցիալ դեմոկրատիայի և ռեֆորմիս-
տական պրոֆշարժման վողջ պրակտիկան: Այդ կազ-
մակերպությունների ամբողջ դաստիարակչական սիս-
տեմը — հարյուրավոր թերթերն ու ժուռնալները, դա-
նադան դպրոցներն ու գրադարանները, տեսական գրա-
կանությունը և կուլտուրական ընկերությունները,
մասսայական ազդեցության և վերընտրական կամպա-
նիաները, այս ամենը պրոլետարիատի մեծաքանակ
խավերի յե ներգրավում բուրժուական քաղաքականու-
թյան մեջ և նրանց յենթարկում և բուրժուական դա-
սակարդային կուլտուրայի ազդեցությանը:

Սակայն չի կարելի յենթադրել, վոր շահագործող-
ների տիրապետությունը պահպանվում և միայն դա-
սակարդային իդեոլոգիայի ազդեցությամբ: Գործա-
մասնություն տիրապետությունը հենվում և ներգոր-
ծություն մի ամբողջ բարդ սիստեմի վրա, մեկ կողմից՝
կրոնը, դպրոցը, մամուլը և գիտությունը անընդհատ
կրկնում են մասնավոր սեփականության սրբություն
մասին, մյուս կողմից՝ այդ «սրբությունը» պահպան-
վում և բանակի, վստիկանություն, դատարանի, բան-
տերի միջոցով:

Այնուամենայնիվ պրոլետարական կուլտուրայի
տարրերն արդեն ստեղծվում են դասակարգային հա-
սարակություն ներսում, և այդ տարրերն այնքան ա-
վելի զգալի ու շատ են, վորքան ուժեղ են կոմունիս-
տական կուսակցությունները, վորոնք գլխավորում են
դասակարգային պայքարը, պրոլետարիատին դաստիա-
րակում են պրոլետարական կուլտուրայի հիմքը հան-
գիսացող մարքսիզմ — լենինիզմի սկզբունքներով: Կա-

վադույն որինակ և հանդիսանում Գերմանիան, վոր-
տեղ ուժեղ կոմկուսակցություն հետ միասին, վորը
հակառակն ազդեցություն ունի պրոլետարիատի և
նրան միացող այլ խավերի վրա, — կա գերտական կո-
մունիստական գրականություն, տասնյակ թերթեր և
ժուռնալներ, պրոլետարական գրողներ և բանաստեղծ-
ներ, արվեստագետներ և թատրոնական դորժիչներ
և այլն:

Սակայն «կապիտալիզմական հասարակություն մեջ
լինելով այնպիսի մի դասակարգ, վորը տնտեսապես
շահագործվում, քաղաքականապես կեղեքվում և կուլ-
տուրապես ճնշվում և, բանվոր դասակարգն անցման
շրջանում միայն, պետական իշխանությունը գրավելուց
հետո միայն, կրթության բուրժուական մենաշնորհը
քարուքանդ անելուց և ամբողջ գիտությունը տեղ
դառնալուց հետո միայն, մեծագույն շինարարական
աշխատանքի փորձի հիման վրա միայն վերահասու-
ցում և իր սեփական բնավորությունը» (կոմիստերի
ծրագրեց):

Պրոլետարիատի լիակատար աղտազրությունը
բուրժուական կուլտուրայի դասակարգային ազդեցու-
թյունից հնարավոր և միմիայն հեղափոխությունը,
վորով հետև «սապալոդ դասակարգը հեղափոխությունը
միայն կարող է մաքրվել հին հասարակության ամբողջ
կեղտից և ընդունակ դառնալ նոր հասարակություն
ստեղծելու համար» («Маркс и Энгельс о Л. Фейер-
бахе»):

Իբրև հակակշիռ Մարքսի և Ենգելսի այս մտքին,
ռուսական մենշևիկները և II Ինտերնացիոնալի բոլոր
տեսաբանները ստեղծել են կուլտուրայի իրենց տե-

սուլթանը հեղափոխութեան կապակցութեամբ: Նրանց կարծիքով, անհրաժեշտ է, վաղ պրոլետարիատը նախ կուտուրայի բարձր աստիճանի հասնի, վորպեսզի ի վիճակի լինի սոցիալիստական հեղափոխութիւնը կատարելու համար: (Համեմատեցե՛ք այս տեսութիւնը եւ կրթութիւնը տալիս պրոլետարիատին, «վորջան աչդ պահանջում են իր շահերը»): Պրա համար էլ թե՛ ուսակաւ մենշեիկներէ, թե՛ Կառուցիկը, թե՛ Ռոտո Բառերի եւ թե՛ մյուսների մոտ գլխավոր դրդապատճառը, վորը պետք է բոլորին համոզեր Հոկտեմբերյան հեղափոխութեան անհաւատակ լինելը, այն էր, վոր մատնանշում էին ուսա բանվորի անկուտուրականութիւնը: Այդ «տեսարաններին» պատասխանել է Լենինը, վոր իր «О нашей революции» հոդվածում հետևյալ կերպ է դնում պրոլետարիատի կուլտուրայի եւ սոցիալիստական հեղափոխութեան կապի հարցը.

«Սոցիալիզմ ստեղծելու համար, ասում եք դուք, պահանջվում է քաղաքակրթութիւն: Շատ լավ: Նու, իսկ ինչո՞ւ մենք չեյինք կարող նախ քաղաքակրթութեան այնպիսի նախադրելներ ստեղծել, ինչպես կապիտալիստների վտարումը, եւ ուսակաւ կապիտալիստների վտարումը, իսկ հետո արդեն շարժում ստեղծել սոցիալիզմի ուղղութեամբ»:

Նույն մտքին Լենինը վերադառնում է «Կոոպերացիայի մասին» հոդվածում, ուր նա գրում է.

«Մեր հակառակորդները շատ անգամ մեզ ասում էին, վոր մենք անբաժանական գործ ենք բռնում, վոր բավականաչափ զարգացած լերկրում սոցիալիզմ հաստատուի: Բայց նրանք սխալվում էին, վորով-

հետև մենք չսկսեցինք այն ծայրից, վորը յենթադրվում էր ըստ տեսութեան (ամեն տեսակ պետանուններէ), եւ վորովհետև մեզ մոտ քաղաքակաւ եւ սոցիալական հեղաշրջումը նախորդը հանդիսացավ այն կուլտուրական հեղաշրջման, այն կուլտուրական հեղափոխութեան համար, վորի առաջ մենք համեմայն դեպս կանգնած ենք հիմա»:

Բերված ցիտատներում դանվում է վոր միայն պատասխանը II Ինտերնացիոնալի «տեսարաններին» —, ալլե կա մի ուրիշ չափազանց կարևոր միտք, վորն ընդգծում է, թե ինչ նշանակութիւն էր տալիս Լենինը կուլտուրայի եւ կուլտուրական հեղափոխութեան պրոցեսին պրոլետարիատի կողմից իշխանութիւնը գրավելուց հետո: Այդ միտքը Լենինի մոտ կրկնվում է շատ անգամ — թե՛ XI համագումարում տված զեկուցման մեջ, թե՛ արտագրական պրոպագանդի վերաբերյալ թեզիսներում, թե՛ խորհրդային իշխանութեան հերթական խնդիրների մասին գրած հոդվածներում, («Лучше меньше, да лучше»), թե՛ երկարօրոյիկացիայի մասին Ի. Ի. Ստեպանովի գրած գրքի առաջաբանում, թե՛ որագրի եջերում եւ ալլա: Ամենուրեք սոցիալիստական շինարարութեան խնդիրները, վորոնք ծառանում էին կուսակցութեան եւ բանվոր դասակարգի առաջ Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո, նա անբաժան կապերով կապել է կուլտուրայի եւ կուլտուրական հեղափոխութեան պրոբլեմների հետ:

Իսկ անցման շրջանի ինչպիսի կուլտուրայի մասին է խոսում Լենինը: Արդո՞ք դա միայն այն խնդիրն է, վոր պրոլետարիատը տիրապետի վորջ բուրժուական կուլտուրային, վորի մատչելիութիւնը նրա համար

սահմանափակված եր բուրժուազիայի անբաժանելի-
թյան պայմաններում: Արդյո՞ք պրոլետարիատի առաջ
խնդիրն է դրված ստեղծելու իր զսասակարգային կուլ-
տուրան, միանգամայն դեռ նետելով բուրժուական դա-
սակարգային կուլտուրան: Կամ, թերևս, տապալելով
բուրժուազիային, պրոլետարիատը սոցիալիստական
կուլտուրա ստեղծում է արդյո՞ք: Ուսումնասիրելով Լե-
նինի ասածները մեզ հետաքրքրող հարցի առթիվ, մենք
հնարավորություն ունենք հետևյալ հիմնական գծերով
բնորոշել պրոլետարիատի դիկտատուրայի շրջանի կուլ-
տուրան.

ա) Անցման շրջանի կուլտուրան բնական շարու-
նակությունն ու զարգացումն է հանդիսանում այն
կուլտուրայի, վոր մարդկությունը կատարել է իր զար-
գացման ամբողջ ընթացքում: Իշխանությունը գրա-
վելուց հետո պրոլետարիատի ռոալին խնդիրն է՝ ա-
վելացնել «գիտություն, լուսավորություն, ուսման տար-
րերը, վորոնք մեզ մոտ ծեծաղելի չափով քիչ են ու-
րիշ պետությունների համամատությունը» (Лучше
меньше, да лучше): Ամենից առաջ հարկավոր է
գրագիտություն — «կարդալ, գրել և հասկանալ կար-
գացածը, վորովհետև «անգրագետ մարդը քաղաքակա-
նությունից դուրս է գտնվում», «անգրագետ լերկրում
չի կարելի կոմունիստական հասարակարգ ստեղծել»,
«անգրագետ մարդիկ ելեկտրիֆիկացիային չեն սա-
զում, և այդտեղ էիլ է լոկ գրագիտություն»: Այսպիսով,
դիկտատուրայի առաջին տարիներէ համար Լենինը
կարևորագույն խնդիրն է համարում վերացնել հետա-
մնացությունը, տիրանդետել բուրժուական կուլտուրա-
յին:

1919 թ. մարտին Պետրոգրադի միտինգում արտա-
սանած ճառում Լենինը խոսում էր այն մասին, վոր
խորհրդային ապարատն այնպես համախմբել աշխա-
տավոր մասնաճեղքին, վոր իր ամբողջ ծանրությունը
ճգմի կապիտալիզմին, «բայց ճգմված կապիտալիզմը
փոր չի կշտացնի. պետք վերցնել ամբողջ կուլտուրան,
վոր թողել է կապիտալիզմը և նրանից սոցիալիզմ
կառուցել. Պետք է վերցնել ամբողջ գիտությունը, տեխնի-
կան, բոլոր գիտելիքները, արվեստը»: Ընդծումը մերն է,
Դ. Կ.):

բ) Սակայն Լենինի դժի կոպիտ խեղաթյուրում կլի-
ներ Լենինի վորջ ուսմունքը անցման շրջանի կուլտու-
րայի մասին բացատրել լոկ իբրև բուրժուական կուլ-
տուրայի տիրապետման պրոցես: Ամենուրեք, ուր Լե-
նինը խոսում է բուրժուական կուլտուրայի տիրապետ-
ման մասին, նա միաժամանակ դնում է նրա քննա-
ման վերամշակման խնդիրը: Պրոլետարիատը
բուրժուական կուլտուրայից վերցնում է միայն այն,
ինչ արժեքավոր ու ոգտակար է սոցիալիստական շի-
նարարության համար, նոր հասարակարգ կառուցելու
համար, և վճռականորեն դեն է նետում այն ամենն,
ինչ կազմում է բուրժուազիայի հոգևոր կուլտուրայի
դասակարգային ելությունը — նրա իդեոլոգիան — կրո-
նը, բարոյականությունը, իդեալիստական փիլիսո-
փայությունը և այլն:

Կուլտուրայի պրոբլեմը Լենինի մոտ անխղելի կա-
պերով կապվում է պրոլետարիատի պրակտիկ գործու-
նեյություն, նրա՝ քաղաքականություն հետ: «Ամենա-
զլխավորը լուսավորություն և մեր քաղաքականության
հարաբերության հարցն է: Մենք մեր լուսավորության

տշխատանքի ամբողջ գծովը մեկ չենք կարող կանգ-
գել լուսավորության ապաքաղաքական լինելու տե-
սակետի վրա, չենք կարող լուսավորության աշխա-
տանքը չկապել քաղաքականության հետ: Այդպիսի
միտքը տիրապետել է և տիրապետում է բուրժուական
հասարակության մեջ: Լուսավորության «ապաքաղա-
քական» կամ «վոչ-քաղաքական» կոչումը բուրժուա-
զիայի կեղծավորությունն է, վոչ այլ ինչ է, չեթե վոչ
մասսաների խաբեությունն» (Լենին. Գաղղուսվարենե-
րի խորհրդակցությունում արտասանած ճառը):

գ) Անցման շրջանի կուլտուրան դաժակարգային,
պրոլետարական կուլտուրա չէ:

Բուրժուական կուլտուրայի յուրացման և վերա-
մշակման պրոցեսը կուլտուրայի մեջ խաղաղ ներածե-
լու պրոցես չի հանդիսանում: Բուրժուական մտքերը,
իդեաները, բուրժուական կուլտուրայի դասակարգային
եյությունը չեն վոչնչանում բուրժուազիայի տնտե-
սական և քաղաքական տիրապետության վոչնչացու-
մից անմիջապես հետո: Նրանք շարունակում են դեռ
չերկար ժամանակ ազդեցություն գործել վոչ միայն
գյուղացիության վրա, այլև պրոլետարիատի զգալի խա-
վերի վրա: Ամեն մի առաջավոր բանվոր գիտե, վոր
նույնիսկ այժմ, Հոկտեմբերյան հեղափոխությունից 14
տարի անց, չնայած պրոլետարական կուլտուրայի մեծ
նվաճումներին, մենք դեռևս չենք վերացրել բուրժուա-
կան իդեոլոգիայի մնացորդները: Ուստի բուրժուական
կուլտուրայի յուրացումն ու վերամշակումը միաժամա-
նակ նրա հաղթանարումն է պայքարի պրոցեսում, վորը
պրոլետարիատի դասակարգային պայքարի ընդհանուր
ֆրոնտի ճակատամասերից մեկն է հանդիսանում: Դա-

սակարգային պայքարի մոմենտը կուլտուրայի բնա-
շավում Լենինն ընդգծել է պարզորոշ կերպով. «Մեր
խնդիրն է, — ասում եր Լենինը քաղղուսվարենրի խոր-
հրդակցությունում, — հաղթանալ կապիտալիստների
ամբողջ դիմադրությունը, վոչ միայն ուղղմական ու
քաղաքական, այլև իդեալական դիմադրությունը, վոր
ամենից խորն է յեվ ամենից ուժեղը» (Ընդգծումը մերն
է. — Դ. Կ.):

Խորհրդային իշխանության 14 տարվա գոյության
ընթացքում ԽՍՀՄ-ի պրոլետարիատը կուսակցության
դեկավարությամբ ամենահարուստ փորձ կուտակեց
դասակարգային պայքարում և կուլտուրայի ֆրոն-
տում: Դասակարգային պայքարը իդեոլոգիայի ֆրոն-
տում դրսևովորվում է բաղադրան ձևերով. վնասարարու-
տում դրսևովորվում է բաղադրան ձևերով. վնասարարու-
թյուն խեղդիայի ասպարիզում, բյուրոկրատիզմ, ա-
ղանդավորական շարժում, անտիսեմիտիզմ — ահա նրա
արտահայտությունները. աա տեղ է գտնում գաղտնում,
ձեռնարկությունում, գիտության և գրականության
մեջ, թատրոնում եայլև: Բուրժուազիայի դասակար-
գային թշնամական իդեոլոգիան գործակալներ և պաշա-
պաններ է գտնում առգամ կուսակցության առանձին
անդամների մեջ. այսպես, որինակ, աջ ուկրոնիստե-
րի վրա քիչ ազդեցություն չեն ունեցել Կոնդրատեվ-
ների, Գրոմանների, Գինդուրգների վնասարարական
տեսությունները: Սոցիալիստական շինարարության
հսկայական աճումը ապահովեց ծավալուն հարձակումը
կուլտուրական ֆրոնտում և պրոլետարական կուլտու-
րայի դիրքերի ամրացումը, վորն արտահայտվեց մար-
քս — Լենինյան տեսության լիակատար հաղթանակով
ընդգեմ մենշևիկացոյ իդեալիզմի (դեբորինյան խումբ)

փերխոփախութեան բնագավառում, ընդդէմ պերելեր-
դեմականութեան՝ գրականութեան բնագավառում, ընդ-
դէմ Ռյազանովականութեան՝ իրրեւ 11 ինտերնացիոնա-
լի գործակալութեան կաշին:

Այս հարձակումը իրենցողիակի բնագավառում ըստ
եղանակեան նշանակում է, վեր ամեն ձեռնարկել ենք
արմատապէս վերակառուցելու, վերակազմելու գիտու-
թյունը, տեխնիկան և արվեստը — մարքս — լենինյան
պատմանդանի վրա: Այս ուղղութեամբ մինչև այժմ
արված զգալի քայլերը պրոլետարական կուլտուրայի
խոշորագույն հաղթանակն են հանդիսանում:¹⁾

Հաղթանակելով բուրժուական իդոլոգիան, պրոլե-
տարիատը՝ փորձեաւ անցման շրջանում տիրող դասա-
կարգ, հիմնապէս շահագրգռված է, վեր իր իդեաները
դառնան դարաշրջանի տիրապետող իդեաներ: Այսպի-
սով պրոլետարիատը դառնում է փոշ միայն տիրող
նյութական ուժ, այլև տիրող դասակարգ անցման շրջ-
անում: «Պրոլետարիատի զիկտատուրան ամենակա-
տաղի, ամենահամառ, ամենահուսալատ պատերազմ է
դասակարգերի միջև» (Լենին. Յերկ. Ժող. XXV՝Ո հատ.—
հջ՝ 151):

Այս դասակարգի քաղաքականութեան շահերին պետք
է յենթակա դարձվեն նրան հարող մյուս դասակարգե-
րի շահերը, դրա համար էլ պրոլետարիատի իդեոլո-
գիան պետք է դառնա մյուս դասակարգերի իդեոլո-
գիան, առաջին հերթին նրանից հետո հիմնականը հան-
դիսացող և նրա զեկավարութեան ներքո գտնվող գյու-
ղացիութեան իդեոլոգիան:

1) Իդեոլոգիայի բնագավառի դասակարգային պայքարի բնու-
թագրութեանը արվելու և յերկրորդ դասում:

Սակայն այս դեպքում չի կարելի անալոգիա անց-
կացնել բուրժուական կուլտուրայի տիրապետութեան
հետ: Բուրժուական մյուս բոլոր դասակարգերին իր
իդեոլոգիային և յենթարկում, վերապահել ամրացնի
շահագործման վրա հիմնված իր տիրապետութեանը,
այսինքն՝ ի վնաս մյուս բոլոր դասակարգերի: Պրոլե-
տարիատը բուրժուական տապալում է փոշ թի նրա
համար, վերապահել ընդմիջում ամրացնի իր զիկտատու-
րան, այլ նրա համար վեր կառուցի նոր, անդասա-
կարգ կոմունիստական հասարակութեան, և այս դեպ-
քում էս աշխատավոր գյուղացիութեան՝ իրրեւ դասա-
կարգի՝ շահերն ամբողջապէս զուգադիպում են պրոլե-
տարիատի շահերին: Դրանից պրոլետարիատի կուլտու-
րան, նրա քաղաքականութեան նման, չի դադարում
դասակարգային, պրոլետարական կուլտուրա լինելուց,
վորովհետեւ շահերի զուգադիպութեանը նշանակում է
միայն այն, վոր պրոլետարիատը գյուղացիութեանը
փոխադրում է իր իդեոլոգիայի ուղիներ վրա:

«Ծնշված դասակարգերի բոլոր շարժումների փոր-
ձը, — գրում է Լենինը բուրժուական դեմոկրատիայի և
պրոլետարիատի զիկտատուրայի վերաբերյալ թեղիս-
ներում, — համաշխարհային սոցիալիստական շարժման
փորձը մեզ սովորեցնում է, վոր միայն պրոլետարիա-
տը կարող է ի մի համախմբել աշխատավոր ու շահա-
գործվող աղքատականութեան ցիրուցան ու հետաքննաց
լրավերին և տանել իր յետեից»:

Պրոլետարիատը «հեղափոխութեան պրոցեսում հաղ-
թանարում է փոշ միայն իր սեփական բնավորութեան-
նը, այլև մյուս դասակարգերի, առաջին հերթին քա-
ղաքի ու գյուղի բազմաթիւ մանր բուրժուական

խավերի և մասնավորապես գյուղացիութեան աշխատավոր խավերի բնավորութիւնը: Ամենապաշտօններին հաղորդակից դարձնելով կուլտուրական հեղափոխութեանը, նրանց ներգրավելով սոցիալիստական շինարարութեան պրոցեսը, միավորելով և կոմունիստներն լուսավորելով նրանց իր տնտրիսութեան տակ գրտնվող բոլոր մեթոդներով, վճռական պայքար մղելով հակապրոլետարական ցեխային իդեոլոգիաների դեմ, առանձին համառութեամբ և սխառեմատիկորեն հաղթահարելով գյուղի ընդհանուր ու կուլտուրական հետամնացութիւնը, բանվոր դասակարգը գրանով իսկ աշխատաստեղծութեան կոլեկտիվ ձևերի ձգտման հիման վրա նախապարաստում ե հասարակութեան դասակարգային բաժանման հաղթահարումը» (Կոմիտեների ծրագրից):

Պրոլետարական կուլտուրայի ելութեան ամբողջական ձևակերպումը մենք գտնում ենք այն բանաձևում, վերը գրել ե կենինը Պրոլետկուլտի համագումարի համար:

«Մարքսիզմը նրանով ե համաշխարհային—պատմական նշանակութիւն ձեռք բերել իրրե հեղափոխական պրոլետարիատի իդեոլոգիա, վոր նա, մարքսիզմը, բընավ դեն չի նետել բուրժուական դարաշրջանի ամենաարժեքավոր նվաճումները, այլ, ընդհակառակը, յուրաքցել ե վերամշակել ե այն ամենն, ինչ արժեքավոր ե մարդկային մաքի ու կուլտուրայի ավելի քան յերկու հազարամյա դարգացման մեջ: Միայն հետագա աշխատանքն այդ հիման վրա ե այդ ուղղութեամբ, վորդեշնչվելով պրոլետարիատի դիկտատուրայի՝ իրրե ամեն տեսակ շահագործման դեմ ուղղված վերջին պայքարի՝ գործնական վործով, կարող ե համարվել իս-

կական պրոլետարական կուլտուրայի զարգացումը: Ինչպիսի ճանապարհներով ե պրոլետարիատը դընում դեպի անցյալի վորջ կուլտուրական ժառանգութեան տիրապետումը, դեպի նրա վերամշակումը դասակարգային սուր պայքարի պրոցեսում, դեպի իր հոգևոր հեղեմոնիայի (տիրապետութեան) ստեղծումը, այսինքն՝ դեպի պրոլետարական կուլտուրայի ստեղծումը: Այդ ճանապարհն անցնում ե կուլտուրական հեղափոխութեան միջով: Մենք վերևում մեջ բերինք Մարքսի ե Ենգելսի այն խոսքերը, վոր միայն հեղափոխութեան մեջ պրոլետարիատը կարող ե մաքրվի ին հասարակութեան կեղտից ե ընդհանակ դատնալ նորը կառուցելու համար: Սոցիալիստական հեղափոխութիւնը վիրում ե բոլոր պատենշները, անհրաժեշտ պայմաններ ե ստեղծում նոր կյանքի կառուցման համար: Բայց պրոլետարիատը սոցիալիստական հեղափոխութիւնից անմիջապես հետո դեռևս չունի այն անհրաժեշտ կուլտուրականութիւնը, վորը նրան հնարավորութիւն տար ամբողջապես ողտադործել նոր շինարարութեան համար ստեղծված հնարավորութիւնները: Բավական ե հիշել, թե քանի անգամ ե ինչպիսի հաստատակամութեամբ կենինը 1917 թ. հոկտեմբերին հաշորդող տարիներում պնդում եր— «Սովորել, սովորել ե սովորել»: Այդ նույն լենինյան գիծը մանք տեսնում ենք նաև կուսակցութեան համագումարներ ի կենտրոնական կոմիտեի հետագա փաստաթղթերում ե ընկ: Ստալինի յիշույթներում: Մյուս կողմից՝ վոր միայն դուրապիտութիւնը, այլև նոր հասարակութեան ղեկավար պրոլետարիատը սոցիալիստական հեղափոխութիւնից հետո այդ նոր հասարակութեան ե մըտ-

նում հին ունակութուններով, տվորույթներով, նախապաշարունակով (կրօնի քաղաքի դում, աղգութուններին նկատմամբ, կենցաղային ձևերում), վորոնք հըրան պատվաստված են հին կարգերի միջոցով՝ շահագործման շահերից յենելով:

Բանվորը չերենք չինական պարսպով բաժանված չի չեղել հին հասարակութունից: Նրա մոտ շատ բան է մնացել կապիտալիստական հասարակության տրագիկոն հոգեբանությունից: Բանվորները նոր հասարակութուն են կառուցում, գեռ չդարձած նոր մարդիկ, վորոնք մաքուր լինեն հին աշխարհի կեղտից, այլ մինչև ծնկները կանգնած են այդ կեղտի մեջ» (Լենին, «Սոցիալիստական միությունների մասին»):

Մինչդեռ պրոլետարիատի գիտատուրայի կարևորագույն առանձնահատկությունն է հանդիսանում հենց այն փաստը, վոր կապիտալիզմի որոշ պետություն կառավարման գործից հեռացված, կուլտուրայից զուրկ մասսաները կոչված են դառնալու նոր հասարակության կառուցման անմիջական մասնակիցները, «վորովհետև այդ հասարակության ստեղծողը կարող են լինել միայն բաղժամի լիոն մասսաները, ինչպես վոր հարյուրավորներ եյին այդ ստեղծողները ճորտատիրության դարաշրջանում, հաղարավորներ և ուսանյակ հաղարավորներ եյին պետություն կառուցում կապիտալիզմի դարաշրջանում, այնպես ել այժմ սոցիալիստական շրջադարձը կարող է արվել միայն այն դեպքում, յեթե տասնյակ միլիոնավորները ակտիվ, անմիջական, կոնկրետ մասնակցություն ունենան պետության կառավարման գործին» (Լենին, «Սոցիալիստական միությունների մասին»):

Այս խնդրի կատարումը պահանջում է, առաջին հերթին, վորպեսզի ամենալայն բաղժամի լիոն մասսաները գինվեն կուլտուրայով: Նոր դասակարգը բոլոր գիտելիքների տերը պետք է դառնա. հաղթանակով դասակարգային թշնամուն, նրան գրկելով քաղաքական և տնտեսական իշխանությունից Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, նա պետք է թշնամուն դուրս շարտի նրա վերջին ամբողջից, ազատագրվի բուրժուազիայի իդեյական աղդեցությունից, քննադատորեն վերաժակի ստացված ժառանգությունը, այդ կուլտուրան հարստացնի պատմության մեջ մեծագույն պաշարի և շինարարության վորձով, վորպեսզի — Լենինի «Великий почин» հղվածում արտահայտված մտքի համաձայն — փոխանակ հասարակական աշխատանքի կապիտալիստական կազմակերպման, վորը հիմնված է քաղցի դեպի պլինայի վրա, ստեղծի հասարակական աշխատանքի կոմունիստական կազմակերպում, հիմնված հենց իրենց՝ աշխատավորների գիտակցական և ազատ կազմակերպման վրա:

Միլիոնավոր մասսաների մասնակցությունը պրոլետարիատի գիտատուրայի պայմաններում կուլտուրայի համար մղվող պայքարի հիմնական ելույթունն է հանդիսանում:

Հուսակապես, դասակարգային սրված պայքարի պայմաններում խնդիր է առաջադրվում՝ վերացնել կուլտուրայի հետամնացությունը, տիրապետել գիտությանը, տեխնիկային, արվեստին, հաղթանակել բուրժուական կուլտուրայի բոլոր դասակարգային գծերը, մարքսիզմ — Լենինիզմի հիման վրա վերակառուցել գիտությունը, մաշդկություն կուլտակած բոլոր գիտելիք-

ները ծառայեցնել կադմակերպված, գիտակցաբար պլանավորվող սոցիալատական տնտեսության կառուցմանը, ապահովել պրոլետարական իդեոլոգիայի արմատացումը աշխատավոր գյուղացիության միլիոնավոր մասսաների մեջ։ Խնդիր է առաջադրվում, վերջապես, արմատապես վերակառուցել մարզկանց։ Ահա այս վրջ պրոցեսում միլիոնների ունենալիք մասնակցության մեջ է պրոլետարիատի կողմից կատարվող կուլտուրական հեղափոխության եյոթնությունը։

Կուլտուրական հեղափոխության համար մղվող պայքարի կոնկրետ բովանդակությունը կազմում է մեր կուլտուրական շինարարության հիմնական ծրագիրը, շինարարություն, վոր կատարվում է կուսակցության ղեկավարությունը Լուսավորության Ժողովրդական կոմիտեի և մարմինների, պրոֆմիությունների, կոմյունիստիկության, հատուկ գիտահետազոտական և ուսումնական կազմակերպությունների ու տնտեսական ներքին պրոլետարիատի կողմից կատարվող ընկերությունների միջոցով։

Առաջիկ ընթացիկում լինիլիսյան ուղիով, կուսակցությունը և վրջ բանվոր դասակարգը խոշոր հաջողություններ ձեռք բիլին պրոլետարիատի կուլտուրական հեղափոխության իրականացման գործում։ Դեռ ընթացիկ հնգամյակում վերջնականապես լուծվելու լին անգղրագիտության վերացման և ընդհանուր պատարզի ուսման խնդիրները։ Աշխարհումս բնավ չտեսված մասշտաբով, կուսակցության ղեկավարիլներ իման վրա, ծավալված է կադրերի պատրաստումը բանվոր դասակարգից, և առաջավոր կոլտնտեսականներից սո-

ցիալիստական շինարարության բոլոր բնագավառներ ի համար Արդեն իսկ 1931թ. կեսերին կուլտեսությունում մտան 15 միլիոն չքավոր—միջակային տնտեսություններ, իսկ ընթացիկ հնգամյակի վերջում կուլեկտիվացումը հիմնականում կավարտվի։ Այդ նշանակում է, վոր արդեն իսկ կանխորոշված է այն մեծագույն խնդրի վերջնական լուծումը, վորը յերբիցե ձեռնարկել է մարզկությունը լուծելու, այսինքն՝ բազմամիլիոն գյուղացիների ազատագրումը այն տնտեսականից, վորը Մարքսը կոչում էր «գյւղական կլանքի իդիոստիլմ»։ Ամբողջ խորհրդային Միության մեջ պայքար է ծավալվում ընդհանուր տեխնիկական զբաղիտություն համար։

Կուլտուրական հեղափոխության հաջողությունների և պրոլետարական կուլտուրայի դիրքերի ամրացման հիման վրա մեջ ծավալուն հարձակում ենք գործում բուրժուական և մանր-բուրժուական իդեոլոգիայի տարրերի վրա ամբողջ ֆրոնտով—գիտության, փիլիսոփայության, գրականության և արվեստի բնագավառներում։ Պրոլետարիատի ղեկավար դերի աճումը հսկայական ազդեցություն ունեցավ խորհրդային Միության բաղմամբիվ ազգությունների կուլտուրաների բարգավաճման վրա։ Վերջապես, մեր լիկրի նյութական և կուլտուրական աճման հիման վրա կուսակցությունը ձեռնարկել է իրագործելու դաստիարակության նոր սխեման—սոցիալիստիկ դպրոցը։

խորհրդային Միության կուլտուրական շինարարության բնագավառների այս վրջ լրիվ թվարկումը բնորոշում է վրջ միայն կուլտուրական հեղափոխության լինիլիսյան բովանդակության եյոթնությունը, այլև

այն քաղերը, վոր արել են կուսակցութիւնը և բան-
վոր դասակարգը այդ լողունդի կենսագործման ուղ-
ղությամբ:

III. Յեղիու Ֆրոնտով պայքար կուլտուրայի հարցերում

Կուլտուրայի հարցերի տեսական մշակման հարցե-
րում և կուլտուրական շինարարութիւն պրակտիկա-
յում մենք հանդիպում ենք զանազան թեքումների՝
կուլտուրայի և կուլտուրական հեղափոխութեան լե-
նինյան ուսմունքից: Հիմնականում այս թեքումներն
ընթանում են յերկու գծով — բուրժուական կուլտու-
րայի և կուլտուրական ֆրոնտում դասակարգային պայ-
քարի դասակարգային բնույթի թերադասադրութիւն,
վոր բնորոշում և ինքնին աջ թեքումը, և ընդհանրա-
պես բուրժուական կուլտուրայի թերագնահատութիւն,
նրա մի գլուխ բացասում, վորը կարելի չե բնորոշել
իրեն «ձախ» թեքում:

«Ձախ» թեքման ամենից ավելի հայտնի կրողն է
յիգիւ պրոլետկուլտը: Պրոլետկուլտի տեսաբանն՝ րն ի-
րենց կազմակերպութիւնը դիտում ելին իբրև կենտրո-
նական լարդրատորիա, որ ստեղծվում և պրոլետարա-
կան կուլտուրան: Նրանց կարծիքով, բանվորը զուրկ
է ամեն տեսակ նախադասարումներից, նրա մոտ, «ա-
մեն ինչ պարզ յեւ մաքիմալիստեմ եիւս ե», «պրոլետա-
րական կուլտուրա կառուցելու խնդիրը կարող է լուծ-
վել միայն պրոլետարիատի ուժերով, նրա ծոցից դուրս
չեկած գիտնականների, արվեստագետների, ինժեներ-
ների միջոցով: Խոսելով գիտութեան մասին, պրոլետ-
կուլտի տեսաբաններն ընդգծում ելին, վոր «այդ նախա-

պարհին առաջին քայլերը պետք է անի իմիւր պրոլետարիատը»:
Սովառնելով «պրոլետարական կուլտուրայի» սուղ-
ծագործութեան բարձունքներում, պրոլետկուլտը մի-
անգամայն թերագնահատում եր տարրական և տեխ-
նիկական գրագիտութեան, աշխատանքի կուլտուրայի,
աշխատելու կարողութեան համար պայքարելու նշա-
նակութիւնը, չիը հասկանում այն հանդամանքը, վոր
անհրաժեշտ է սոցիալիստական շինարարութեան շա-
հերի համար պատրաստել մասնագետների պրոլետա-
րական կարեր և ոչտագործել կապիտալիզմի որոք
մեծացած և դաստիարակված պրոֆեսորներին, ման-
կավարժներին, գեղարվեստագետներին:

Այստեղ բերված ցիտատները վերցված են ընկ. Պլետ-
նեվի հոդվածից, վորը տպագրված է «Պրավդա»-յում
1922 թ.: Այդ հոդվածում շարադրված է պրոլետկուլ-
տի ծրագիրը: Այս հոդվածն առանձնապես հետաքրքրա-
կան է նրանով, վոր Լենինը մի շարք նշումներ կա-
տարեց նրա լուսանցքներում: Այդ հոդվածի ընդգծում-
ները նույնպես Լենինինն են: Առաջին ցիտատի դիմաց
(«ամեն ինչ պարզ...» և այլն) Լենինը լուսանցքում
գրել է. «իսկ բանվորներն և գյուղացիների կրոնը...»:
Յերկրորդ ցիտատի դիմաց («պրոլետարական կուլ-
տուրա կառուցելու...» և այլն) Լենինն ընդգծելով «մի-
այն» և «նրա» բառերը, լուսանցքում գրել է — «աբ-
խիֆիկցիա»: Յերրորդ ցիտատի դիմաց («այդ նախա-
պարհին առաջին քայլերը...» և այլն) Լենինը գրել է՝
«դատարկարանութիւն»:

Լենինն ամբողջ վճռականութեամբ դեմ դուրս յե-
կավ պրոլետկուլտի այն ձգտումների, վորոնք նպա-
տակ ունեյին «պրոլետարական կուլտուրայի» կարի-

նետախին ստեղծագործութեամբ փոխարինել քանկորական ու գլուղացիական միլիոնավոր մասսաների շարժումը անցյալի վողջ կուլտուրական ժառանգութեանը տիրապետելու համար, կուլտուրական հեղափոխութեան համար, իրոք պրոլետարական կուլտուրա ստեղծելու համար: Պրոլետկուլտի տեսութեանը նկատի ունենալով, լենինը կոմյեքրիտմիութեան III համագումարում ասում էր.

«Առանց պարզ հասկանալու այն, Վոր մարդկութեան վողջ զարգացմամբ ստեղծված կուլտուրան ճիշտ գիտենալով միայն, այն վերամշակելով միայն կարելի չե պրոլետարական կուլտուրա ստեղծել, — առանց այդ հասկանալու մենք այդ խնդիրը չենք լուծի: Պրոլետարական կուլտուրան մի ինչ-որ տեղից դուրս պրծած բան չէ, հերքուրանք չե այն մարդկանց կողմից, վերոնք իրենց համարում են պրոլետարական կուլտուրայի մասնագետներ: Այդ ասելը ամբողջապես դատարկարանութուն է: Պրոլետարական կուլտուրան պետք է որինաչափ դարգացումը հանդիսանա գիտելիքների այն պաշարների, վորը մարդկությունը մշակել է կապիտալիստական հասարակութեան, կալվածատիրական հասարակութեան, չինովնիկական հասարակութեան ճշմարտաներքը»:

Մյուս թեքումը այն մի խումբ ընկերների տեսութեանն է, վորոնք պնդում են, թե պրոլետարական անցման շրջանում ստեղծում է վոյ թե պրոլետարական կուլտուրա այլ սոցիալիստական կուլտուրա: Մյուս տեսակետը շարադրված է ընկ. Լուպպոլի «Ленин и Философия» գրքում, ընկ. Բորրովնիկովի «Проле-

тарият и культура» գրքում (այլն¹⁾): Դասակարգային պրոլետարական կուլտուրայի, իրրև անցման շրջանի տիրապետող կուլտուրայի ժխտումը փորձում են հաստատել լենինը և Վիսալով մոտիվներով — առաջին, վոր պրոլետարիատը, տապալելով բուրժուազային, չի ձգտում ապացուցել դիկտատուրայի հավերժությունը, այլ ընդգծում է, վոր հիմնական խնդիրը անդասակարգ հասարակութեան կառուցումն է. լենինը և վոր հաստատելով պրոլետարական կուլտուրայի յուրահատուկ դասակարգային գծերը, պրոլետարիատը դրանով վանում է մանք բուրժուազիային և գլուղացիութեանը:

Սոցիալիստական կուլտուրայի կողմնակիցների առաջադրած դրույթն ինքնին վերցրած ճիշտ է. պրոլետարիատն իրոք վոր չերեք չի փորձել ապացուցել, վոր նա անդասակարգ կոմունիստական հասարակութուն կառուցելուց բացի այլ նպատակ էլ ունի: Բայց անդասակարգ հասարակութեան կառուցումը կատարվում է ամենասուր դասակարգային պայքարի պրոցեսում: Կուսակցությունն աջ թեքման դեմ մղած պայքարում վաղուց է մերկացրել դասակարգային պայքարի մարման թեորիայի կուլակային ելակետը: Անգամ կոլեկտիվացման և կուլակություն՝ իրրև դասակարգի՝ վերացման մեծագույն հաջողությունները դասակարգային պայքարի մահացում չեն նշանակում, թեև դասակարգային թշնամու տնտեսական բազան թեքադաքում և թե գլուղում անսովոր չափերով սեղ-

1) Ընկ. Բորրովնիկովը «Под знаменем марксизма» ժուռնալի 1931 թ. №1—2-ում ծավալուն քննադատության է յենթարկել իր խախնները պրոլետարական կուլտուրայի հարցերում:

մըվում է: Ընդ որում, խոսելով դասակարգային պայ-
քարի մասին, չի կարելի աչքաթող անել, վոր պրո-
լետարական դիկտատուրայի յերկիրը շրջապատված է
թշնամի իմպերալիստական ողակով:

Այդ պատճառով ել անցման շրջանի ալայմանե-
րում մարդու դաստիարակութունը և նրա գիտակցու-
թյան ձևակերպումը պետք է նպատակ ունենան պատ-
րաստել այնպիսի մարտիկի, վորը գինված լինի դա-
սակարգային աշարջությամբ, պատրաստ լինի ղեկը
ձեռքին պաշտպանելու պրոլետարական պետութունը,
պատրաստ լինի անխնա պատժել թշնամուն, ընդու-
նակ լինի միանգամայն ճիշտ կողմնորոշվել դասակար-
ային պայքարի բոլոր ամենաբարդ և ամենաբաղձա-
զան դրսևորումների մեջ: «Խորհրդային բանվոր-գյու-
ղապետական հանրապետութունում լուսավորությա
գործի ամբողջ կազմակերպումը ինչպես քաղաքական
լուսավորության բնագավառում, այնպես ել հատկապես
արվեստի բնագավառում պետք է տոգորվի այն դաստ-
կարգային պայքարի վոգով, վոր ժողով է պրոլետարիատն
իր դիկտատուրայի նպատակները հաջող իրագործման
համար, այսինքն՝ բուրժուազիայի տապալման դասա-
կարգերի վաշնչացման համար, մարդու միջոցով մար-
դու ամեն մի շահագործումը վերացնելու համար»: Այս-
պես եր գրում է նրանք պրոլետարական կուլտուրայի
վերաբերյալ թեղիսներում: Վոր այս ամենը վերջին
հաշվով արվում է սոցիալիստական շինարարության
շահերի համար, կոմունիզմի հաղթանակի շահերի հա-
մար, դրանից լանդրի ելութունն ամենևին չի փոխ-
վում:

Այսպիսով, պրոլետարական դիկտատուրայի ժըխ-

տումը, թեկուզ և սոցիալիստական կուլտուրայի դրոշի
տակ, ըստ ելության նշանակում է սվաղել դասակար-
գային պայքարը, չհասկանալ կապիտալիզմից սոցիա-
լիզմի անցման շրջանի ամբողջ բարդութունը:

Յերկրորդ մոտիվը, վոր պրոլետարիատը, խոսելով
դասակարգային պրոլետարական կուլտուրայի մասին,
իրենից վանում է գյուղացիութունը, ըստ ելության
սխալ է: Դուրս է գալիս, վոր գյուղացիութունն ա-
վելի ձգտում ունի սոցիալիզմի, քան պրոլետարիատը,
դրա համար ել նրան վախեցնում է դասակարգային
պրոլետարական կուլտուրան, վորն իբրև թե կասեց-
նում է շարժումը դեպի սոցիալիզմը: Այդտեղ բացա-
հայտ թյուրիմացություն է կա: Պրոլետարիատն իրագե-
ներկայացնում է բոլոր աշխատավորների և այդ թվում,
ինարկե, աշխատավոր չբավոր-միջակային գյուղա-
լիցության պատմական շահերը, ընդ վորում հանդիսա-
նալով բոլոր աշխատավորների գեկավարը: Բաց նա իր
պատմական միտիան, իր ղեկավարութունը (հեգեմո-
նիան) իրականացնում է վոչ թե նրանով, վոր ան-
ցնում է գյուղացիութան տեսակետին, այլ, ընդհա-
կառակը, իր խնդիրը կատարում է միայն՝ այն ժա-
մանակ, լերը նա, ինչպես այդ նշեց XVI համագու-
մարը, ձգտում է պրոլետարական իդեոլոգիան արմա-
տացնել կուլտոնական գյուղացիության սիլիոնա որ
մասսաների մեջ: Այս դրույթը փայլուն կերպով հաս-
տատվեց կոլեկտիվացման համար մվոզ պայքարի
փորձով: Այնտեղ, ուր տեղական կազմակերպութուն-
ները ճիշտ ելին կիրառում կուսակցության գիծը, ան-
հաշտ պայքար ելին ժողով կուլակութան դեմ, կոլեկ-
տիվացումն ալելի հաջող էր ընթանում:

Վերջապես, հարկավոր է նշել մի մոմենտ էս, սոցիալիստական կուլտուրայի կողմնակիցները մասնաշրջում են Լենինին, վերջ հաճախ պրոլետարական կուլտուրայի փոխարեն գործածում են սոցիալիստական կուլտուրա արտահայտությունը: Այդպիսի լերկուսթիւրք վոր գոյութիւն ունի: Այդ նուէն բանին մենք հանդիպում ենք նաեւ ընկ. Ստալինի մոտ, վորք Սրեվելքի ժողովուրդների համալսարանում կարդացած իր գեկուցման մեջ ազգային կուլտուրան բնորոշում է իրրեւ ձեով աղբային և բովանդակութեամբ պրոլետարական կուլտուրա, իսկ կուսակցութեան XVI համագումարում ընկ. Ստալինն ասում է — ձեով ազգային և բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրա (Ընդգծումը մերն է. Դ. Կ.):

Սակայն սոցիալիստական կուլտուրայի կողմնակիցների այս մեղհորոմները ցույց են տալիս միայն այն, վոր նրանք շարունակ պրոլետարական կուլտուրան հաղադրում են սոցիալիստականին, վորն առնապիսի սխալ է: Պրոլետարական կուլտուրան իր մեջ կրում է սոցիալիստական կուլտուրայի, ապագայի այդ կուլտուրայի տարրերը: Նա աշխարհում գործացնում է այն զծերը, վորոնք սոցիալիստական հիմքերն են լինելու (կուլեկտիվիզմ, ինտերնացիոնալիզմ), և այս տեսակետից միանգամայն հնարավոր է սոցիալիստական կուլտուրա տերմինի գործածութիւնը: Այնուամենայնիւ անցման շրջանի պայմաններում բուրժուական կուլտուրային հակադրվում է վոր թե անդասակարգ սոցիալիստական կուլտուրան, այլ մարտական դասակարգային պրոլետարական կուլտուրան:

Պրոլետարիատի դեկտատուրայի որոք կուլտուրայի

պրոլետին մասին առանձին, լենինյան տեսակետից տարրեր տեսակետ էր պաշտպանում նաեւ Տրոցկին: Այդ տեսակետը շարադրենք հենց նրա խոսքերով. «Դիկտատուրայի դարաշրջանում նոր կուլտուրա ստեղծելու, այսինչն՝ պատմական մեծագույն մարտարի շինարարութեան մասին խոսելու կարիք չի լինի. իսկ անցյալի հետ վոչնչով չհամեմատվող այն կուլտուրական շինարարութիւնը, վորք դալու յեւայն ժամանակ, յերբ կվերանա անհրաժեշտութիւնը պրոլետարիատի դիկտատուրայի ցերկաթյա բազուկներում, արդեն իսկ վոր մի դասակարգային բնութիւն չի ունենալու» («Литература и революция», стр. 41):

Իր միտքը Տրոցկին հաստատում է հետևյալ դրույթով. անցման շրջանի իրենից ներկայացնում է «անցման կարճատեւ շրջան... պրոլետարիատի գլխավոր ցեղանդն ուղղվելու յեւ իշխանութիւնը դրավելու, այն պահելու, ամրացնելու և կիրառելու հանուն գոյութեան անհետաձգելի կարիքների և հետագա աշխատանքի»: Անցման շրջանի նյութիւնն այդ կերպ հասկանալիս՝ բնական է, վոր «ավերածութիւնն ագիլի մեծ տեղ կունենա, քան նոր շինարարութիւնը», վոր «պրոլետարիատի դիկտատուրան նոր հասարակարգի արտատարի դիկտատուրան կազմակերպումը չէ, այլ նրա դրական — կուլտուրական կազմակերպումը չէ, այլ նրա համաք պաշտպանութեան հեղափոխական-մարտական կարգը: Այստեղից ինքնին բխում է այն չեղրակացութիւնը, վոր «պրոլետարական կուլտուրա վոր միայն չկա, այլ չի լինելու», և «այլ մասին իմոք վոր հինք չկա ցովելու»: Այդ պատճառով «մեր դարաշրջանը դեռես նոր կուլտուրայի դարաշրջան չէ, այլ լոկ նրա նախադուր: Մենք պետք է առաջին հերթին պետականորեն

տիրապետենք հին կուլտուրայի կարևորագույն տար-
րերին, թեկուզ և այնքանով, վոր կարողանանք հար-
թել նորի ճանապարհը:

Տրոցկու՝ անցման շրջանի կուլտուրայի տեսու-
թյունն ընդհանրապես տրոցկիզմի հարադատ ծնունդն
է:

Տրոցկին անցման շրջանի մեջ տեսնում և միայն
քաջայման դարաշրջան, վոչ թե շինարարության դա-
րաշրջան: Նա աչատեղ ևս ժխտում և սոցիալիզմի հա-
սուցումը մեկ չերկրում, — ուստի միանգամայն հաս-
կանալի չէ, վոր կուլտուրական շինարարության մա-
սին վոչ մի խոսք լինել չի կարող: Ըստ Տրոցկու դուրս
է գալիս, վոր պրոլետարիատն անցման շրջանում ամ-
բողջապես բավարարվում և լոկ բուրժուական կուլ-
տուրայի մի քանի փշրանքներով: Ըստ ելության այս
տեսությունը լիակատար կապիտուլացիա չէ բուր-
ժուական կուլտուրայի առաջ:

Առանձին հետաքրքրության և արժանի կուլտու-
րայի լինելնյան ուսմունքի առթիվ կատարված այն
սխալների ու խեղաթյուրումների մերկացումը, վորոնք
պեղի ունեցան պրոֆիտիւթյունների կուլտաշխատան-
քի պրակտիկայում: Ով գոն հ մի քիչ հետաքրքրվել և
կուլտաշխատանքի հարցերով, չի կարող նկատած չլի-
նել, վոր վերջին տարիներս մեր մամուլը շարունակ
ընդգծել և պրոֆիտիւթյունների կուլտաշխատանքի հե-
տամնացությունը սոցիալիստական շինարարության
ընդհանուր խնդիրներից, բերել և անթիվ փաստեր, վո-
րոնք ցույց են տալիս ապաքաղաքական, զազա փա-
րագուրկ աշխատանքի առկայությունը, կուլտուրան,
արհամարհական վերաբերմունքը բանվորների կուլ-

տուր-կենցաղային կարիքները սպասարկման հանդեպ
ևայլն: Այդ գնահատականը տալիս են վոչ միայն բն-
թղթակիցներն իրենց բաղձաթիվ թղթակցություննե-
րում, բրիգադների արձանագրությունները, զանազան
հողվածները, այլև այդ փաստը արձանագրված և պաշ-
տոնական փաստաթղթերում — ՀԱՄԿԽ-ի նախագահու-
թյան և պլենումների վորոշումներում, համամիութե-
նական աղումային խորհրդակցության վորոշումնե-
րում ևայլն: Գործնական կուլտաշխատանքում տիրող
այդպիսի դրոթյան հետևանքն այն լեզվով, վոր մի
այդպիսի դրոթյան ընթացքում պրոֆիտիւթյուններն ա-
շարք տարիների ընթացքում պրոֆիտիւթյուններն ա-
վելի քիչ մասնակցություն ունեցան կուլտուրական
հեղափոխության համար մղվող պայքարում, քան այդ
թույլ ինքնության համար մղվող պայքարում, քան այդ
թույլ ինքնության համար բավական և
ներքին: Այս միտքը հաստատելու համար բավական և
մատնանչել այն հանրաժանութ փաստը, վոր պրոֆիտ-
ությունները մինչև V III համագումարը իրենց կուլտ-
ֆոնդերի 30—40 տոկոսը ծախսում էին գեղարվես-
տական աշխատանքի վրա, իսկ անգրագիտության վե-
րացման վրա՝ 1—1½ տոկոս, արտադրական տեխնի-
կական լուսավորության վրա՝ մեկ տոկոսից ել պա-
կաս:

Ինչով և բացատրվում այս յերևույթը: Յեթև ամե-
նաթուրցիկ կերպով իսկ ծանոթանալու լինենք պրոֆ-
միտիւթյունների կուլտաշխատանքի զարգացման պատ-
մության հետ, ապա կտեսնենք, վոր ՆեՊ — ի անցնե-
լուց հետո պրոֆիտիւթյունական կուլտաշխատանքներում
վորոշ բեկում առաջացավ, վորը և նրան տվեց նոր
ուղղություն: Իրականության մեջ պրոֆիտիւթյունների
III համագումարը կուլտաշխատանքի մասին տված դի-

բեկտիվներին կենտրոնակետը դարձրեց արտադրական տեխնիկական հարցերը, IV համագումարը, վոր անցկացավ դեռևս ռազմական կոմունիզմի նշանաբանով, առաջին պլանի վրա դրեց աշխատանքային դպրոցին աջակցելու խնդիրը, Թե մի, և թե մյուս ղեկավարում վերցվեցին կուլտուրական շինարարության ըստ ամենաչնի ակտուալ հարցերը, Եւրոպայի անա վրա հասավ ՆեՊ—ը, և ՀԱՄԿԽ-ի փետրվարյան (1932 թ.) պլենումը Հա.Կ. (Բ)ԿԿ-ի վորոշումից հետո նշեց պրոֆմիութունների գործնական խնդիրները նոր անտեսական քաղաքականության վրա անցումը:

ՀԱՄԿԽ-ի պլենումի ընդարձակ պլենումի բանաձևում հատուկ ըստին կա կուլտաշխատանքի մասին, բայց այդտեղ արդեն իսկ չկա վոչ արտադրական տեխնիկական կրթությունը, վոչ սոցիալական դաստիարակությունը, վոչ եւ անգամ անգրագիտություն վերացումը. հիմնական տեղ և գրավում գանաղան խրմբակներ (սպորտային, յերածշտական և այլն) կազմակերպելու և բանվորների առողջ ժամանցի պահանջները բավարարելու հարցը:

Կուլտաշխատանքի հիմնական դիրքավորումներին վորոշման այս շնչառակի փոփոխությունը, պրոֆշարթման մյուս մի շարք սխալների պես, բացատրվում և այն բանով վոր ՀԱՄԿԽ-ի այն ժամանակվա ղեկավարությունն ընկ. Տոմսկու գլխավորությամբ վոչ—լինինխատորեն եր հասկանում ՆեՊ-ի եյությունը: Կենտրոնի համար ՆեՊ-ը ուժերի վերախմբավորում եր, ժամանակավոր նահանջ ծավալուն հարձակման համար, ռազմական կոմունիզմից տարբեր տակտիկա, բայց նույն նպատակներին հասնելու համար: ՀԱՄԿԽ-ի հին

եւելս լսուլթյան և ընկ. Տոմսկու համար ՆեՊ-ը, ամենի առաջ, սոցիալիզմի և կապիտալիզմի խաղաղ համակեցություն չըջան եր: Այդտեղից եր բղխում պրոֆմիութունների արտադրական խնդիրների, դասակարգային պայքարի մահադման հարցի նոր մեկնաբանությունը: Այդտեղից եյին գալիս նաև նոր «սկզբունքային» դիրքավորումները պրոֆմիութունների կուլտաշխատանքի համար:

Մենք արդեն խոսեցինք այն մասին, թե պրակտիկալում ինչպիս արտահայտվեցին կուլտաշխատանքի այս դիրքավորումները: Դժվար չե ցույց տալ, թե ներառեց ինչքան սերտ են կապված այն սկզբունքային դիրքի հետ, վոր ուներ ընկ. Տոմսկին կուլտուրայի և կուլտաշխատանքի հարցերում: Ընկ. Տոմսկին պրոֆշարթման մյուս բոլոր ղեկավարներից ավելի լեր հետաքրքրվում պրոֆմիութունների կուլտաշխատանքի հարցերով: Գործունեություն այդ բնագավառը նա շոշափում եր պրոֆմիութունների աշխատանքին ու խընդիրներին նվիրված իր բոլոր չնույթներում:

Յոթե աչքից անցկացնենք այդ հարցի առթիվ նրա ամբողջ ասածներն ու գրածները, ապա հեշտություն մը կհամոզվենք, վոր վոչ մի տեղ ընկ. Տոմսկին պրոֆմիութունական կուլտաշխատանքի առաջ չի դրում անցյալի կուլտուրայի վողջ հարստության—գիտություն, տեխնիկայի, արվեստի— տիրապետման հարցը պրոլետարիատի կողմից: Նրա մյուս առանձնահատկությունն այն և, վոր նա չի հասկանում դասակարգային պայքարը կուլտուրական ֆրոնտում և մասսաների դասակարգային քաղաքական դաստիարակություն նշանակությունը: Ըստ ընկ. Տոմսկու, միութե-

նական կուլտուրիստանքը պետք է դրադվի մի քիչ ժամանցի կազմակերպմամբ և մի քիչ ել լուսավորությամբ, ընդ վորում վոչ մի բնագավառը չպետք է զերակշռի, առանձնապես փաստակալը և քաղաքացիական թշնամի գերակշռութունը: Այս լուրոր նակ «հավասարակշռության տեսությունը» նա շոշափում և իր բոլոր յերույթներում՝ մինչև VIII համագումարը ներառյալ, ուր նա անվերջ դանդաժում եր մրությունների կուլտուրիստանքում տեղի ունեցող յերերման մասին: Այդ հարցն առանձնապես հստակ ձևակերպում ունեցավ նրա այդ ճառում, վոր նա արտասանեց ի վանդո — Վոգի սենսակում, պրոֆմիությունների նահանգական համագումարում: «Առաջին թեքումը, վորի մասին յես բաղմիցս առիթ եմ ունեցել խոսելու, այն մտավախությունն է, թե մենք չափազանց շատ ենք տարվում ակումբի զվարճացուցիչ կողմով... Յերկրորդ թեքումը, — վոր նույնքան վտանգավոր է, գուցե յեվ ավելի վստիգավոր, այն է, վոր մենք կարող ենք մեր ակումբը և վորջ կուլտուրիստանքը դարձնել համատարած չոր ուսուցում»: (Ընդգծումը մերն է — Դ. Կ.): Մասսաների դասակարգային բաղաքական դաստիարակության նշանակութունը չհասկանալով ընկ. Տոմսկին այնտեղ հասավ, վոր ժխտում եր հակակրոնական պրոպագանդը:

«Յես այստեղ կհիշեցնեմ այն թեքումները, վորոնք տեղի ունեցան հակակրոնական պրոպագանդի առնչուելթյամբ, յերբ պրոֆշարժման դժով աշխատողները, առանց կարգալու իրենց բանաձևերը, նետվում ելին կուսակցական շրջաբերականների վրա, և քանի վոր հակակրոնական պրոպագանդը մի ժամանակ մոդա

յեր, քանի վոր հակակրոնական պրոպագանդով դրադվում ելին բացորձակապես բոլորը, ուստի պրոֆաշխատողներն ել սկսեցին դրադվել այդ պրոպագանդով, մինչև իսկ կրոնական նախապաշարուներին դեմ պուլքարելու աստիճանի, տվյալ դեպքում միանգամայն մոռացության տալով պրոֆմիությունների հիմնական խնդիրը, այն է՝ իբրեւ փոխանցման ապարատ ծառայել ավանգարդի և դասակարգի միջև, պրոլետարիատի կուսակցության և ընդհանրապես պրոլետարիատի սիջև» (ճառ պրոֆմիությունների VI համագումարում):

Ինչ վերաբերում է այն վերաբերմունքին, վոր ուներ ընկ. Տոմսկին դիտությունը, տեքնիկան պրոլետարիատի սեփականությունը դարձնելու խնդրին, ապա այդ կարելի է յե լուսարանել նրա հետևյալ յերույթով, վորը միակեր չե անշուշտ, ուր նա շոշափում է տվյալ հարցը. «Յերբ դուք մոտենում եք նրան (խոսքը բանվորի մասին է — Դ. Կ.), վորպեսզի կրթեք նրան, յերբ նա Տ ժամ ա խատելուց հետո ակումբ է գալիս, ընդ վրում դուք նրան այսոր տալիս եք բուլսերի ֆիզիոլոգիա, վաղը՝ ինչ վր ճառագայթների նոր տատանումները, ապա դրանից հետո ել ինչ վոր, դիցուք III Ինտերնացիոնալի պատմություն, — բանվորը կդիմանա մեկ տարի, կդիմանա յերկու տարի, բայց յես հավատացած եմ, վոր յեթե դուք նրան յերկու տարի ես աղպես դաստիարակելու լինեք, նա կմեռնի ուղեղի հյուսմախտից» (Մ. Տոմսկի. «Միութենական նոր քաղաքականության արդուքները», զեկուցում պրոֆմիությունների V համագումարում):

Կուլտուրայի և մասսաների դաստիարակության համար պալքարելու խնդրի այսպիսի մեկնաբանու-

թշուհը այնտեղ հասցրեց ընկ. Տոմսկուն, վոր կուտա-
աշխատանքի հիմնական լողունը դարձավ «առանց
ուղղութիւն» լողունը, վոր նա ձևակերպից պրոֆ-
միություններ VI համագումարում արտասանած ճա-
ռի վերջին խոսքում. «Հարկավոր է այս աշխատանքից
(խոսքը կուտաշխատանքի և ակումբների մասին է—
Դ. Կ.) վտարել վոչ միայն հարկադրողականութիւն
հետքն անգամ այլև տաղտկալութիւն, դիսուսմավո-
րութիւն հետքերը: Իսկ դուք բանվորին ամեն ինչ ա-
լիս եք դիտումնավոր կերպով, հատուկ ուղղութիւնը,
խմբակներն եւ հատուկ ուղղութիւնը, դա ձանձրա-
ցնում է բանվորին, նա կամենում է ստանալ այլ բան,
վոր ուղղութիւն չունենա» (ընդգծումը հեղինակինն է):

Այս ցիտատները միանգամայն բավական են ցույց
տալու համար, վոր, առաջին՝ ընկ. Տոմսկու գլխավո-
րած ՀԱՄԿԽ-ի հին ղեկավարութիւնն հալացքները
կուտաշխատանքի խնդիրների մասին ընդհանուր վո-
չինչ չունին կուտուրական հեղափոխութիւն լինիւն
դրվածքի հետ, յերկրորդ՝ այդ ցիտատները բավական
են բացատրելու կուտաշխատանքի սրակտիկայում
կատարված փերոհիշյալ սխալների արմատները:

Յեթե, չնայած բոլոր թեքումներին, սրոկետարիա-
տը հակայական հաջողութիւններ ձեռք բերից կու-
տուրական շինարարութիւնն բնագավառում, ապա այդ
բացատրվում է միայն նրանով, վոր կուսակցութիւնը
և նրա կենտրոնական կոմիտեն անշեղ կերպով լի-
նիւնյան գիծը կուտուրայի հարցերում և այդ ճակա-
տումն եւ, ինչպես մեր վողջ շինարարութիւնն մեջ, ան-
խնա պայքար մղեցին յերկու ֆրոնտի վրա,— ինչ-
պես ընդդէմ անցյալի կուտուրական աշխատանքի

թերագնահատման, այնպես եւ դասակարգային պայ-
քարի թերագնահատման իդեոլոգիայի բնագավառում:

IV. Լենինի յիվ Սալիկի ուսմունքը ազգային-կու-
սուրակաւ շինարարութիւն մասին

Ազգային—կուտուրական շինարարութիւնն պրո-
լեմը կուտուրայի և կուտուրական հեղափոխութիւն
լինիւնյան ուսմունքի բաղկացուցիչ մասն է հանդիսա-
նում: Դեռևս սինչև Հոկտեմբերյան հեղափոխութիւն-
նը, մի քանի կուսակցութիւններն նացիոնալիստա-
կան տենդենցների և հատկապես մանր-բուրժուական
Բունդի նացիոնալիզմի դէմ պայքարելիս, Լենինը ձե-
վակալից բայլիվիկյան սկզբունքները ազգային հար-
ցում և մասնավորապես ազգային կուտուրական շի-
նարարութիւն հարցում: Ինչպես հայտնի է, Բունդն
իր ծրագրում կուտուրական—ազգային ինքնավարու-
թիւնն պահանջ էր առաջադրում: Այդ պահանջն ըն-
դունվեց Կովկասյան սոցիալ-դեմոկրատների (վրացա-
կան մենշևիկներն) կողմից, իսկ լիկվիդատորների
համառուական կոնֆերանսը 1912 թ. ընդունեց, վոր
կուտուրական-ազգային ինքնավարութիւնն պահանջը
չի հակասում կուսակցութիւնն ծրագրին:

Կուտուրական-ազգային ինքնավարութիւնն ելու-
թիւնը Լենինը բնորոշում է հետեւյալ խոսքերով. «Յու-
րաքանչիւր ազգ, անկախ այն բանից, թե վորտեղ և
ապրում նրան պատկանող վորեւ մի անդամը (անկախ
տերիտորիայից, այստեղից եւ «եքստերիտորիալ»—
արտերկրային— կոչումը), կազմում է միասնական, պե-
տական-բնական ճանաչված միութիւն, վորը վարում է
ազգային-կուտուրական գործերը: Այդ գործերից գըլ-

խաղորդը դարձրեցական գործն եւ Յուրաքանչյուր քաղաքացու, անկախ նրա բնակավայրից, վորեն ազգային միութեան մեջ աղատորեն գրանցելու միջոցով ազգի կազմի վորոշումը ապահովում եւ դարձրեցական գործն ըստ ազգութեանների բաժանելու բացարձակ ճշտութեան ու բացարձակ հետեղականութեանը» (Ленин. «О культурно-национальной автономии»): «Կուլտուրական—ազգային» ինքնավարութեան կյութեան այս բնութագրութեանից հետո կենինը հարց եւ տալիս. «Թույլատրելի՞ յի աշխարհի բաժանումն ընդհանրապես դեմոկրատիայի տեսակետից եւ մասնավորապես պրոլետարական դասակարգային պայքարի շահերի տեսակետից», եւ պատասխանում եւ. «Անպայման, անթույլատրելի յի» (նույն տեղում):

Կենինը լիակատար առումով եր գնահատում ազգային պրոբլեմի նշանակութեանը, այն ընդարձակելով շատ ավելի, քան Ս. Խատենացիոնալի տեսարանները, վորոնց հետաքրքրում կիին միայն ճնշված «կուլտուրական ազգերը» (Իրլանդիա, Լեհաստան եւ այլն), եւ առաջին անգամ լինելով պրոլետարական շարժման առաջ դրեց գաղութային ու կիսագաղութային յերկրներին ազգային—ազատագրական շարժման պրոբլեմը: Պաշտպանելով լեզուների իրավահավասարութեանը, Կենինն ազգերի ինքնորոշման հասկացութեանը ընդարձակեց նրանց լիակատար բաժանման աստիճանի:

Սակայն Կենինի դիրքը բոլոր ռեֆորմիստների դիրքից տարբերող առանձնահատկութեանը շարունակ յեղի եւ այն, վոր Կենինը ազգային պրոբլեմի լուծումը լերբիք չի դրի պրոլետարիատի հեղափոխական պայքարից անջատ: Իսկ «սոցիալիստական» կուսակցու-

թյունների նացիոնալիզմը շարունակ կապված ե յեղի լուրաքանչյուր ազգի ներսում յեղած դասակարգային տարբերութեանները մոռացութեան տալու հետ: Հենց այդ պատճառով Կենինը, առարկելով անդասակարգ «կուլտուրական—ազգային» ինքնավարութեան դեմ, գրում եր. «Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան դեմոկրատական եւ սոցիալիստական կուլտուրայի թեկնուղ եւ զարգացած օտրեր, վորովհետեւ յուրաքանչյուր ազգում կա աշխատավոր եւ շահագործվող մասսա, վորի կյանքի պայմանները դեմոկրատական եւ սոցիալիստական իդեոլոգիա յեն ծնում: Բայց, յուրաքանչյուր ազգում կա նաեւ բուրժուական կուլտուրա (մեծ մասա՛ր դեռեւս սահարյուրյակային ու կղերական), ընդ վորում վոչ թե «տարրերի» ձեռով, այլ ֆիւրայեմող կուլտուրայի ձեռով Այդ պատճառով «ազգային կուլտուրան» ընդհանրապես կալվածատիրերի, տերտերների, բուրժուազիայի կուլտուրա յի» (Ленин. «Критические замечки по национальному вопросу»):

Այսպիսով, Կենինը «ազգային կուլտուրայի» հարցը սերտորեն կապակցում ե այն բանի հետ, թե վո՞ր դասակարգն ե տիրապետող հանդիսանում, եւ, հետեւապես, բուրժուազիայի տիրապետութեան պայմաններում խոսել ազգային կուլտուրայի մասին, նշանակում ե խոսել տիրապետող կուլտուրայի, այսինքն՝ բուրժուական կուլտուրայի մասին: Միայն պրոլետարիատի հաղթանակը կստեղծի այնպիսի անհրաժեշտ պայմաններ, վորոնք «դեմոկրատական եւ սոցիալիստական կուլտուրայի» անդարգացած տարրերի համար ապահովում են ազգային կուլտուրայի հիմք դառնալու հնարավորութեանը: Դրա համար ել «ազգային կուլտուրայի» լու-

դուռնը բուրժուական լողունը էր, քանի դեռ իշխանության գլուխն եր կանգնած բուրժուական, իսկ ազգերի կոնսոլիդացիան տեղի չեր ունենում բուրժուական կարգերի հովանավորության ներքո Ազգային կուլտուրայի լողունը պրոլետարական լողունը դարձավ, յերբ իշխանության գլուխն անցավ պրոլետարիատը, իսկ ազգերի կոնսոլիդացիան սկսեց տեղի ունենալ խորհրդային իշխանության հովանավորության ներքո ԲՈՂՆԻ հասկացել չեր ու տարբեր իրադրությունների այս սկզբունքային տարբերությունը, նա յերեք չի հասկանա վնչ լենինիզմը, վոչ էլ ազգային հարցի ելությունը լենինիզմի տեսակետից (Ստալին — «Լենինիզմի հարցերը», «Արեւիկի ժողովուրդների հաշտարանի քաղաքական խնդիրների մասին»):

Ինչու՞նք ե ազգային-կուլտուրական շինարարության պրոբլեմի լուծումը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում Այս հարցին մենք ի վիճակի չենք պատասխանել վոչ միայն կուսակցության սկզբունքային զիրքավորումներ տեսակետից, վորոնք արձանագրված են փաստաթղթերում (Կուսակցության արձանագրության բանաձևեր, Լենինի և Ստալինի չերկեր)՝ այլև ցույց տալ, թե ինչպես են կենսագործվել այդ սկզբունքային զիրքավորումները և վորոնք են նրանց արդյունքները:

Խ. Միության տերիտորիայում ապրում են 100-ից ավելի ազգություններ, ըստ վորում 150 միլիոն ազգաբնակչությունից, մոտավորապես 80 միլիոնը վելիկոռուսներ են, վորոնք ցարի որոք կազմում էին տիրապետող մեծապետական ազգը. մնացած ազգությունները, վորոնք ԽՍՀՄ-ի բնակչության զրեթե կեսն են

կազմում, այն ժամանակ յինթարկվում էին բուրժուականի, կալվածատերերի և ցարական չինովնիկների ամեն տեսակ ճնշումներին: Յարիզմի քաղաքականությունը. կալվածատերերի և բուրժուականի քաղաքականությունը այս ժողովուրդների նկատմամբ այն եր, վոր վոչնչացնի ամեն մի պետականության սաղմերը նրանց մէջ, անդամալուծի նրանց կուլտուրան, դուրս մղի լեզուն, տգիտության մէջ պահի և, վերջապես, հնարավորության չափով ուստականացնի: Այդ ժողովուրդների անդադրացածությունն ու քաղաքական հետամնացությունը այդպիսի քաղաքականության արդյունքներն են» (Համկ(ը)Կ X համադուժաշի քանաձևից):

Պրոլետարիատը բուրժուականի և կալվածատերերի վրա հաղթանակ տանելուց հետո կուսակցության ղեկավարությանը վոչ միայն ստեղծեց ազգային խորհրդային հանրապետություններ և ազատ ֆեդերացիա (իսկ հետո Խորհրդային Հանրապետությունների Միություն), այլև, ամենից առաջ հաշվի առնելով ճնշված ազգությունների հետամնացությունը, նշեց կոնկրետ միջոցառումներ ծրագրել, «վոր պետի ողնի վոչ — վելիկոռուս ժողովուրդների աշխատավորական մասսաներին հասնել առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին, ողնի նրանց ա) զարգացնել և ամրացնել սոփական խորհրդային պետականությունը՝ այդ ժողովուրդների ազգային — կենցաղային պայմաններին համապատասխանող ձևերով. բ) զարգացնել և ամրացնել մայրենի լեզվով գործող դատարան, վարչություն, տնտեսական որդաններ, իշխանության որդաններ, վորոնք կազմված լինեն տեղական բնակչության կեն-

ցաղն ու հոգեբանությունը ճանաչող բնիկ մարդկան-
ցից՝ գ) զարգացնել սեփական մամուլը, դպրոց, թատ-
րոն, ակումբ և ընդհանրապես կուլտ—կրթական հաս-
տատություններ՝ մայրենի լեզվով, զ) մայրենի լեզվով
կադմակերպել և զարգացնել ինչպես հանրակրթա-կան,
ախպես եւ պրոֆեսիոնալ կական բնույթի դասընթաց-
ների ու դպրոցների լայն ցանց (առաջին հերթին
կիրգիզներին, բաշկիրներին, թուրքմեններին, ուզբեկնե-
րին, տաճիկներին, ադրբեջանցիներին, թաթարներին, դա-
ղստանցիներին համար)՝ արագ թափով պատրաստելու
համար վերալցալ բանվորներին և խորհրդային-կուսակ-
ցական աշխատողներին բնիկ կադրեր կառավարման
բոլոր բնագավառներին և ամենից առաջ լուսավորու-
թյան բնագավառին գծով (Ռկ(բ)ի X համագումարի
բանաձևից)։

Այս միջոցառումներին զուգընթաց X համագումա-
րը նշեց ազգային խորհրդային հանրապետությունների
տնտեսական ուժի ամրացման ծրագիր և առաջին հեր-
թին դրեց նրանց արդյունաբերության զարգացման
խնդիրը։

Կուսակցությունը հեղափոխության բոլոր տարի-
ներում անշեղորեն կենսագործեց ընդհանրապես ազ-
գային պրոլետին և մասնավորապես ազգային-կուլտու-
րական շինարարության լուծման լենինյան սկզբունք-
ները։ Այդ քաղաքականության արդյունքները տալիս
են կուլտուրական հեղափոխության մեծ ծավալման
պատկերը նույնիսկ ամենից ավելի հետամնաց ազգա-
յին խորհրդային հանրապետություններում և մար-
զերում։

Հեղափոխության 14-րդ տարում մենք ունենք այն-

պիսի ազգային մարզեր (Կարաբաղինո-Բալկարյան և
Ադեգեռայի մարզերը), ուր ցարի ժամանակ զբաղեցնե-
րը կազմում էին 2—5%,-իսկ հիմա համատարած դրա-
զիտություն մարզեր են։ ազգային հանրապետու-
թյունների և մարզերի խոշոր մասում (վորոնժ ցարի ժա-
մանակ գրագիտության չնչին տոկոս ունեյին), գրա-
գիտների տեսակարար կշիռը 1931 թ. գարնանը 60%-ից
անցավ, 1932 թ. վերջում խորհրդային Միության
բազմաթիվ ազգությունների մեջ, դառավ ծերունիներ
ից ու պառավներից բացի, ալլես անգրագետ չի լի-
նկու։ Միայն խորհրդային Իշխանությունը կարողա-
ցավ բարձրացնել կուլտուրական ամենից ավելի հե-
տամնաց ազգությունների գրագիտության տոկոսը ա-
ռաջավոր կապիտալիստական լերկիրների մակարդա-
կին։

Առաջներում ծխական դպրոցներում կամ մոլանե-
րի մոտ սովորող լերկսաների չնչին տոկոսի դիմաց
մենք 1931 թ. հիմնականում ավարտեցինք դպրոցական
տարիքի լերկսաների ընդգրկումը պարտադիր ուս-
ման դասցում։ Աճել է գյուղգիրիտ դպրոցների, վո-
րակցալ աշխատողներ (տրակտորիստներ, հաշվետար-
ներ, անգրագիտության լիկվիդատորներ և այլն) պատ-
րաստող զանազան կարճատև դասընթացների մի հըս-
կայական ցանց։ Հարյուր հազարավոր արևելգի կա-
նալք ազատագրվել են դառավոր ստրկությունից, հա-
սարակական աշխատանք են կատարում խորհուրդնե-
րում, գոյտնտեսություններում, իբրև դաստիարակու-
հի յեն աշխատում մանկական նախադպրոցական հիմ-
նարկներում, ազամարդկանց հետ միասին սովորում են
դասընթացներում, նրանք ազատագրվում են նաև հո-

գևորականութեան ճանկերից: Տասնյակ ԲՈՒՀ-եր, տեխնիկական ԲՈՒՀ-եր և տեխնիկոմներ, վերտեղ սովորում են մայրենի լիզուներով, պատրաստվում են մանկավարժներ, դուռնատնտեսներ, բժշկներ, պատրաստվում են բնիկների վորակյալ կադրեր — բանվորներ, կոլտնտեսականներ, չքավորներ և միջակներ: Վոչ միայն կուլտուրական ազգերը — ուկրաինացիները, վրացիները, հայերը և այլն, այլև ամենից ավելի հետամնացները հսկայական հաջողութուններ են ձեռք բերել գրականութեան, լատերենի, յերաժշտութեան ասպարիզում, ստեղծել են պրոլետարական և կոլարնտեսական գրողների կազմակերպութուններ, թերթեր, ունեն հրատարակչութուններ, կինո — կազմակերպութուններ, թուրքական ժողովուրդների մեծ մասը արաբական տառերը փոխարինել և լատինական տառերով, վորը դգալի չափով հեշտացնում և գրագիտութունը սովորելու գործը մասսաների համար: Ազգային հանրապետութուններում ստեղծված են մի շարք գիտա — հետազոտական հաստատութուններ, ուր կոմվում են բնիկ գիտական աշխատողներ:

Փաստերի այս վոր-լրիվ թուրցիկ թվարկումը այնուհամենայնիվ պորդ պատկերացում և տալիս այն անմպերի մասին, վորով ԽՍՀՄ-ի բազմաթիվ ազգութունները առաջ են բնթանում դուլտուրական հեզափոխութեան ուղիով, ստեղծելով և դարգացնելով իրենց սեփական կուլտուրաները:

Ինչպիսի պայմաններն ելին, վոր ապահովեցին ազգային — կուլտուրական շինարարութեան բարգավաճումը: Առաջին պայմանն այն և, վոր կուսակցութունը, պայքարելով ազգային — կուլտուրական շինարա-

րութեան համար, «ապարատի ազգայնացման, մամուլի, դպրոցի և այլ պետական ու հասարակական կազմակերպութունների ազգայնացման համար» (Ստալին), ամեն կերպ ապահովեց պրոլետարիատի տիրապետող ազգեցութունը ազգային կուլտուրայի զարգացման վրա: Յերկրորդ պայմանը, վոր ապահովեց հաջողութունը ազգային — կուլտուրական շինարարութեան բնագավառում, դա այն պայքարն էր, վոր մղեց կուսակցութունը լենինյան սկզբունքից կատարված ամեն տեսակ թեքումների դեմ ազգային հարցում:

Ազգային կուլտուրան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ձևակերպում և վորպես «բովանդակութեամբ պրոլետարական, ձևով ազգային» Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ նրան բովանդակութուն և տալիս: Յեմ, բնգահառակը, ազգային կուլտուրան չի վերացնում պրոլետարական կուլտուրան, այլ նրան ձև և տալիս» (Ստալին):

Ազգային կուլտուրայի կապակցութեամբ հաճախ այսպիսի մի հալց և դրվում — կոմունիստական կուսակցութունները կոմիստերնի գլխավորութեամբ պայքարում են կոմունիզմի հաղթանակի համար ամբողջ աշխարհում, բայց չեմ վոր այդ հաղթանակից հետո կվերանան բոլոր պատնեշները ազգերի միջև և վերջիններս կուլվին մեկ լիովով խառող մեկ կոմունիստական հասարակութեան մեջ: Ել ինչո՞ւ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում զարգացնել ազգային կուլտուրան ու լիզուն: Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք ընկ, Ստալինի մոտ. «Պետք և հնարավորութուն տալ ազգային կուլտուրաներին

զարգանալ ու ծաղկել: զբաւորել նրանց բոլոր պո-
տենցիաները, վերապահ պայմաններ ստեղծվին նը-
րանց ձուլելու մեկ լիզու ունեցող մեկ ընդհանուր
կուլտուրայի մեջ: Ձեռով ազգային և բովանդակութամբ
պրոլետարական կուլտուրաների բարգաւաճումը պրո-
լետարիատի ղեկատուութայի պայմաններում մեկ յեր-
կրում նրանց մեկ ընդհանուր սոցիալիստական (թե
ձեռով և թե բովանդակութամբ) և մեկ լեզվով կուլտու-
րայի մեջ ձուլելու համար, յերբ պրոլետարիատը հաղ-
թի ամբողջ աշխարհում և սոցիալիզմը կենցաղում ար-
մատանա, — հենց զբա մեջ և ազգային կուլտուրայի
հարցի լեւինյան դավածքի ղեկակալականութունը:

Այսպիսով, ընդլին ազգային կուլտուրայի՝ բուր-
ժուազիայի տիրապետութեան պայմաններում, վերով-
հետեւ այնտեղ դա բուրժուական լոգոնդ է, ազգային
կուլտուրան ամեն կերպ զարգանելու համար՝ պրոլե-
տարիատի ղեկատուութայի պայմաններում մեկ յեր-
կրում, ամբողջ աշխարհում կոմունիզմի հաղթանակից
հետո բոլոր ազգային կուլտուրաները մեկ ընդհանուր
կոմունիստական կուլտուրայի մեջ ձուլելու նպատա-
կով:

Ազգային-կուլտուրական շինարարութեան խնդրում
կուսակցութեան գլխի համար պայքարելը խոշոր դրժ-
վարութունների հաղթանարման հետ և կապված: Այս-
տեղ աղբյուրութուն ունի լոգ միայն ազգութունների
մեծ մասի կուլտուրական հետամնացութունը, այլ և
նրանց մեջ չեղած պրոլետարիատի թուլութունը, և
այն, վեր արդունարեւական տեսակետից ամենից ա-
վելի զարգացած ազգային հանրապետութուններում
պրոլետարիատը զգալի չափով ռուսականացված է:

Հիմնական խնդիրը, վեր գրվել և և զբաւած և կուսակ-
ցութեան առաջ, հետեւյալն է — վերացնել ազգային
մանր բուրժուազիայի, հոգեորականութեան և կուլ-
կութեան աղբյուրութունը կուլտուրայի զարգացման
վրայից և ստեղծել այնպիսի պայմաններ, վերոնք ա-
պահովեն պրոլետարիատի հեղինակաւոր ազգային կուլ-
տուրական շինարարութեան ամբողջ պրոցեսում: Այս
հանգամանքը հանդիսացել է և հանդիսանում և կարե-
վորագույն պայմանը ազգերի արմատականացման հա-
մար, վերալին իրագործվում է պրոլետարական մաս-
սաներին անմիջապէս մասնակից դարձնելով ազգային
կուլտուրայի զարգացման պրոցեսները ղեկավարելու
գործին:

Կուսակցութունն իր գիծը կիրառում է աղու
պայքար մղելով ազգային հարցում յեղած յերկու թե-
քումներին — մեծապետական շովինիզմի և տեղական
նացիոնալիզմի դեմ:

«Մեծապետական շովինիզմի թեքման ելութունն
այն է, վեր ձգտում են անտես առնել լեզվի, կուլտուրա-
յի, կենցաղի ազգային տարրերութունները. ձգտում
են նախապատրաստել ազգային հանրապետութունե-
րի ու մարզերի վերացումը, ձգտում են ող հանել աղ-
գային իրավահավասարութեան սկզբունքը և վայր նե-
տել կուսակցութեան քաղաքականութունը ապարատի
ազգայնացման, մամուլի, դպրոցի և այլ պետական ու
հասարակական կազմակերպութունների ազգայնաց-
ման խնդրում» (Ստալին. 16-րդ կոմհամագումարում
տված զեկոնցութից) և վերկուսական շովինիզմի սր-
մատները գտնվում են անցյալում, նա օվիլ կոռուսնե-
րի նախկին առանձնաշնորհյալ դրութեան ապտացու-

լուսնն և հանդիսանում (XII համագումարի բանա-
ձևից)։

Մեծապետական շովինիզմը թեքումն ունի նաև իր
տեսությունը, վորը լինինիզմի բացահայտ խեղաթյու-
րում և հանդիսանում, թեև ուկրոնիստները ձգտում են
աժդացնել իրենց տեսակետները Հենինից մեջբերում-
ներ անելով։ Նրանք պրոլետարիատի դիկտատուրայի
ըջանին ել են վերագրում Հենինի այն խոսքերը, թե
ազգային կուլտուրան բուրժուական լողունգ է, դրա
համար ել նրանք ինտերնացիոնալիզմի կողմնակից են,
ազգային կուլտուրային՝ դեմ։ Վերևում մենք բերեցինք
մի ցիտատ Հենինից ազգային կուլտուրայի մասին և
այդ հարցի դրումն ընկ. Ստալինի կողմից՝ ի պատաս-
խան ուկրոնիստներին։

Կա նաև լերկու կուլտուրաների պայքարի տեսու-
թյունը, վորը նույնպես մեծապետական շովինիզմի
ծնունդն է։ Այդ տեսության ելությունը հետևյալն է.
ազգային հանրապետություններում կան լերկու կուլ-
տուրաներ — քաղաքային (պրոլետարական, ուսա-
կան) և գյուղական (տեղական, ազգային, դյուղացի-
կան), և միանգամայն ակնհայտ է, վոր անխուսափելի
յե ավելի բարձր պրոլետարական, այսինքն ուսական
կուլտուրայի հաթանակը։ Ուսական կուլտուրայի ա-
ռավելությունների վերաբերյալ խոսակցությունները
և ավելի հետաքննաց ժողովուրդների կուլտուրաների
(ուկրայինական, ադրբեյջանյան, ուզբեկյան, կիրգի-
զյան և այլն) հանդեպ ավելի բարձր, ուսական կուլ-
տուրայի հաթանակման անխուսափելիության դրույթն
առաջադրելը վոչ այլ ինչ են, յեթե վոչ մեծապետա-
կան նացիոնալիզմի տիրապետություն աժդացնելու

փորձ։ Այդպիսի դնահատական և ապիս կուսակցու-
թյան XII համագումարի բանաձևը յերկու կուլտուրա-
ների պայքարի տեսությանը։

Ինչի յե հանգում մեծապետական շովինիզմը, Այդ
հարցի պատասխանը տալիս է ընկ. Ստալինը XVI
համագումարում տված զեկուցման մեջ «Վոչնչաց-
նել այժմ հանրապետություններն ու մարզերը, նշա-
նակում է ԽՍՀՄ ժողովուրդների միլիոնավոր մասսա-
ներին զրկել մայրենի լեզվով կրթություն ստանալու
հնարավորությունից, զրկել նրանց մայրենի լեզվով
դպրոց, դատարան, վարչական, հասարակական և այլ
կազմակերպություններ ու հիմնարկություններ ունե-
նալու հնարավորությունից, զրկել նրանց սոցիալիս-
տական շինարարության հաղորդակից լինելու հնարա-
վորությունից»։ Այդ նշանակում է միանգամայն մոռա-
ցության տալ «կուլտուրական հեղափոխության լո-
ղուզը պրոլետարիատի դիկտատուրայի ըջանում, վորը
միատեսակ նշանակություն ունի ԽՍՀՄ բոլոր ժողո-
վուրդների համար — թե վելիկոռուսների և թե վոչ-վե-
լիկոռուսների համար»։

Այս բոլորի հետևանքով, կուսակցության թե XII
և թե XVI համագումարները մեծապետական շովինի-
զմի թեքումը դնահատեցին վորպե՝ ամենավտանգա-
վոր թեքումը ազգային հարցում։

Այժմ քննեք լերկորդ թեքումը ազգային հար-
ցում։ «Տեղական նացիոնալիզմի թեքման ելությունն
այն է, վոր ձգտում են անջատվել և փակվել սեփական
ազգային կենպում, ձգտում են սքողի իրենց ազգի
ներսում յեղած դասակարգային հակասությունները,
ձգտում են մեծապետական շովինիզմից պաշտպանվել

սոցիալիստական շինարարութեան ընդհանուր հոսանքից մեկ կողմը քաշվելու միջոցով, ձգտում են չտեսնել այն, ինչ իրար ե մոտեցնում ու միացնում ԽՍՀՄ ազգութունների, աշխատավորական մասսաներին, և տեսնել միայն այն, ինչը նրանց կարող է հեռացնել միմյանցից» (Ստալին: Զեկուցում XVI համագումարում):

Այս թեքման արմատները գտնվում են ամենից առաջ այն բանում, վոր «նախկինում կեղեքվող ազգութունների վերացող դասակարգերը դժգոհ են պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմից», ձգտում են «առանձնանալ իրենց սեփական ազգային պետութեան մեջ և այնտեղ հաստատել իրենց դասակարգային տիրապետութեանը» (նույն տեղում):

Կուսակցութեան քաղաքականութեանը ազդելին հարցում, կուսակցութեան և խորհրդային իշխանութեան կոնկրետ գործունեությունը, նրանց աջակցությունն արդյունաբերության զարգացմանը ազգային հանրապետություններում և մարդերում (վորը վերջնականապես եկոնոմիկայում ևս կոչնչացնի ցարիզմի ժամանակ գոյություն ունեցող այն դրությունը, լերբ ալդ հանրապետություններն ու մարդերը հումք մատակարարող գաղութների վիճակում ելին գտնվում), միխոնավոր չքավոր-միջակային դուրացիություն կալեկտիվացումը, անխնա պայքարը կուլակության դեմ և դրա հետ միասին լայն ծավալված կուլտուրական հեղափոխությունը, — այս բոլորը քանդում են տեղական նացիոնալիզմի վոտքի տակի հողը: Ի հարկե, տեղական նացիոնալիզմի թեքումը չի վոչնչացված: Թե գրականության մեջ և թե ազգային ԲՈՒՀ-երի պատե-

րից ներս հաճախ են յերևան գալիս այնպիսի նացիոնալիստական տենդենցներ, վորոնք արտացոլում են մեռնող կուլակության հույսերը: Տեղական նացիոնալիզմին սնունդ տվող հող է հանդիսանում մեծապետական շովինիզմը, վորի մասին դեռևս XII համագումարում ընկ. Ստալինն ասում էր, վոր «դա մեր ամենավտանգավոր թշնամին է, վորին մենք պետք է տապալենք, վորովհետև յեթե մենք նրան տապալենք, ⁹⁾10-ով տապալած կլինենք և այն նացիոնալիզմը, վորը մեացել է և վորը զարգանում է առանձին հանրապետություններում»:

Այսպիսով, կուսակցությունը, դեկավերելով կուլտուրական հեղափոխության պրոցեսը ԽՍՀՄ ազգութունների մեջ, լիակատար աջակցություն ցույց տալով ազգային կուլտուրաների զարգացմանն ու բարգավաճմանը, վճռական պալքար է մղում ազգային հարցում լեղած թեքումների դեմ — մեծապետական շովինիզմի, իբրև գլխավոր վտանգի, և տեղական նացիոնալիզմի դեմ:

V. Կուսակցությունը կուլտուրայի բնագավառում

Վերևում մենք բերինք Չարլս Դարվինի Կարլ Մարքսին դրած նամակից մի քաղվածք և Մարքսի ու Ենգելսի Ինստիտուտի ծանոթությունն ալդ նամակի առթիվ: Ինստիտուտի ծանոթության մեջ ասված է, վոր նամակն ելի ու ելի ցույց է տալիս, վոր բուրժուական եղիտության ազատությունը ամենապատարլա սուտ է, վորը բուրժուազիան ճարպկորեն ոգտագործում է մասսաներին խաբելու համար:

Բուրժուազիան և նրա լակեյները — բոլոր լեհերների սոցիալ-ֆաշիստները, շատ անգամ շահագործում են ազատության և հավասարության լոգոնշանները:

Գանի անգամ բայլշեվիկների գեղ վայրագ կատաղությամբ բռնված սոցիալ-դավաճանների ամբողջ խումբը մեզ տվել է «ուղուրպատորներին», բարբարոսների և նման այլ անուններ, մեզ խարազանել է իրեն դեմոկրատիայի խախտողների, ազատության թշնամիների: Բանվորների, ֆաշիստների, անարխիստների և հատկապես սոցիալ-լակեյների այս միաբերան վայնասունը մեզ վրա վոչ մի տպավորություն չի գործում: Բանն այն է, վոր բայլշեվիկյան, լենինյան կուսակցությունը և նրա կողմից հեղափոխական մարքսիզմ — լենինիզմի վազով դաստիարակված խորհրդային բանվոր դասակարգը միանգամայն հստակ տեսակետ ունեն ազատության, հավասարության և նման այլ հարցերի մասին:

Ահա թե ինչպես է Լենինը բնութագրում բուրժուական ազատությունը:

«Ձեր ազատությունը, պարոնայք անգլիացիներ, ֆրանսիացիներ և ամերիկացիներ, խաբեություն է... Դուք լուռացել եք մի մանրուք, պարոնայք քաղաքակրթվածներ: Մոռացել եք, վոր ձեր ազատությունը գրված է մի սահմանադրության մեջ, վորը որինակաչանցում է մասնավոր սեփականությունը: Ահա թե ինչն է բանը, ազատության կողքին՝ սեփականություն, այդպես էլ գրված է ձեր սահմանադրության մեջ... Ձեր ազատությունն այն է, վոր ազատություն է թղթի վրա և վոչ թե իրականում» (Ленин. «Об об-

мане народа лозунгами свободы и равенства», («Յերկ. ժող. XVI հատ. 1-ին հրատ.»):

Այնուհետև Լենինն իր միտքն ընդգծում է մի շարք որինակներով, վորոնք ցույց են տալիս, վոր կապիտալիստական հասարակության պայմաններում ազատության լոգոնշան ընդհանրապես ազատություն է լոկ ապրանքատերերի համար: Իսկ բանվոր դասակարգը, վոր միայն մեկ ապրանք ունի — բանվորական ուժը, — զրկված է այդ ազատությունն ոգտագործելու ամեն մի հնարավորությունից: Հենց այդ փաստն է, վոր բուրժուազիան խնամքով անտեսում է, լերբ ամեն քայլափոխում փառաբանում է բուրժուական ազատությունը:

Ազատ է արդյոք գիտնականն իր յեղրակացություններում, բանաստեղծը, գրողը, արվեստագետը, լերաժիշտն՝ իրենց ստեղծագործության մեջ: Ազատ է արդյոք մամուլը բուրժուական հասարակարգում: Վոչ մի տեղ և չերբեք կապիտալիստական կարգերում այդպիսի ազատություն գոյություն չի ունեցել և չունի «Բուրժուական գրողի, արվեստագետի, գերասանուհու ազատությունը լոկ դիմակավորված (կամ կեղծավորաբար դիմակավորվող) կախումն է փողի քսակից, կաշառքից, պանդանյան ծախքերից» (Ленин. «Партийная организация и партийная литература»):

Այն կախումը, վոր ունեն գիտությունը, արվեստը, և փիլիսոփայությունը բուրժուազիայից, ստեղծվում է խիստ բարդ սխտեմի ոգնություն: Մեկ կողմից՝ կուլտուրայի ավելի բարձր աստիճանների վրա բարձրանալ, այսինքն՝ գիտնական, գրող, գեղարվեստագետ բանալ, այսինքն՝ գիտնական, գրող, գեղարվեստագետ դառնալու հնարավորություն է ստեղծվում այն անդառնալու համար, վորոնք պատկանում են բուրժուական ձանց համար, վորոնք պատկանում են բուրժուական

դասակարգին, մյուս կողմից՝ մանր բուրժուազիայից և անգամ աշխատավորությունից դուրս լինած գործիչների բաղմամբ խավը իդեյապես դաստիարակվում և տիրապետող դասակարգի վոգով և նյութականապես լիակատար կախման մեջ դրվում նրա հանդեպ:

Մենք վերևում բերինք արդեն Լենինի այն խոսքերը, վոր բուրժուական սահմանադրությունների մեջ ազատության կողքին դրված և սեփականությունը— դրանում և վողջ բուրժուական ազատությունը:

Դիտնականը, փրկստիան, գրողը ազատ են այնքան ժամանակ, վորքան կողմնակից են մասնավոր սեփականության: Իսկ յերբ նրանք դեմ են դուրս գալիս սեփականության, նրա գլխին թափվում են բոլոր դժբախտությունները— մերժում են ապագրել նրանց գործերը, տալագրածը վաճառքից հանում են, ընկերներն ու մերձավորները յերես են դարձնում նրանցից ևայլն:

Բուրժուական «ազատության» բնութագրությունը վերջացնելու համար բերենք Լենինի խոսքերը մամուլի ազատության վերաբերյալ. «Ի՞նչ և արդյոք մամուլի ազատությունը կապիտալիստական հասարակագրում»,— հարցնում և Լենինը լուսավորության և սոցիալիստական կուլտուրայի համաժողովների համադրումը արտասանած ճառում, և սլատասխանում և. «Մամուլի ազատությունը կապիտալիստական հասարակագրում— այդ նշանակում և մամուլի առևտուր անելու և ժողովրդական մասսաների վրա ներգործելու ազատություն»:

Մամուլի ազատություն,— այդ նշանակում և ժողովրդական մասսաների վրա ներգործելու այդ ամեն

նաուժեղ զենքի պահպանումը կապիտալի հաշվին:

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում և, վոր «չի կարելի ապրել հասարակության մեջ և ազատ լինել հասարակությունից» (Ленин. «Партийная организация и партийная литература»): Ուստի վոտից գլուխ հերյուրանք են այն խոսակցությունները, վոր վերաբերում են գիտության, տեխնիկայի, արվեստի գործիչների «անկուսակցականությանը», կապիտալիզմից անկախ լինելուն: Դասակարգային հասարակության մեջ վոչ վոք չի կարող ապագասակագրային իդեոլոգիա արտահայտել, վորովհետև այդպիսին բնավ գոյություն չունի: Յերբ կապիտալիստական յերկրների գիտություն և արվեստի ներկայացուցիչները կամենում են բոլորին համոզել, թե նրանք «արդարության կողմնակից են», «որչեկտիվ ճշմարտության» կողմնակից են, թե նրանք պայքարող դասակարգից և վոչ մեկին չեն ծառայում, ապա այդ նրանց կողմից մի միջոց և թագցնելու իրենց ծառայությունը կապիտալիզմին, գիտական խաբեյության միջոցով գրավելու աշխատավոր մասսաների վստահությունը: Մեր կուսակցությունը և ամբողջ կոմիստերը գտնում են, վոր «ամեն մի ազատություն խաբեյություն և, լեթե նա չի հակասում աշխատանքը կապիտալիստների ճնշումից ազատագրելուն» (Համկ(բ)ի ծրագրից): Ուստի բուրժուազիայի վրա հաղթանակ տանելուց հետո պրոլետարիատը բալը չեվիկյան կուսակցության ղեկավարությունը վճռապես չեվիկյան լեկավ բուրժուական ազատականորեն դեմ դուրս լեկավ բուրժուական ազատության հարցը, Լեթյան: Շոշափելով մամուլի ազատության հարցը, Լեթյան ասում եր, վոր բալը չեվիկները քաղաքանդ արին այն, «և նրանք պարծենում են այն բանով, վոր նր

րանք առաջին անգամ լինելով տվին մամուլի ազատություն, վոր նրանք առաջին անգամ լինելով հսկայական լերկրում ստեղծեցին այնպիսի մի մամուլ, վորը կախում չունի մի բուռ հարուստներից և միլիոնատերերից, ժամուլ, վորն ամբողջապես նվիրված է կապիտալի դեմ պայքարելու խնդիրներին» (Լուսավորության և սոցիալիստական կուլտուրայի աշխատողների համագումարում արտասանած ճառից):

Ազատություն այս սկզբունքը կուսակցությունը կիրառում է կուլտուրայի բոլոր բնագավառներում — գիտություն, փիլիսոփայություն, մանկավարժության, արվեստի մեջ: Կուսակցությունը չի ճանաչում գիտության այնպիսի «ազատություն» վորը կամենում կանգնել պայքարող պրոլետարիատի կողմը, չի ուղղված սոցիալիստական շինարարությանն աջակցելու կողմը. կուսակցությունը չի ճանաչում արվեստի այնպիսի «ազատություն», վորը խանգարում է արվեստին պրոլետարական կուլտուրայի ակտուալ կիրառողը դառնալու, ամենաբարդ դժվարությունների հաղթանարման, դասակարգային թշնամու դեմ ուղղված պայքարի և սոցիալիզմի կառուցման խնդրում մասսաներին վոգեշնչելու. կուսակցությունը չի ճանաչում փիլիսոփայության այնպիսի «ազատություն», վորը փիլիսոփայությունը կտրուժ է կարևորագույն կոնկրետ խնդիրներից, վորոնց լուծման վրա աշխատում են կուսակցությունը և բանվոր դասակարգը. կուսակցությունը չի ճանաչում մանկավարժության այնպիսի «ազատություն», վորը խանգարում է մանկավարժությանը՝ կոմունիստական դաստիարակության ակտիվ կիրառողը լինել, վորը վոչ-կրոնական (վոչ թեք, վոչ դեմ)

դաստիարակություն և քարոզում, փոխանակ կրոնի դեմ ակտիվ պայքարելու: Կուսակցությունը կառեզորիկ կերպով դեմ է սալադասակարգային «անկուսակցական» գիծը կուլտուրայի բնագավառը քարշ տալու ժամն մի փորձի, վորովհետև դա լուկ պրոլետարիատի դասակարգային թշնամու թագուն գիծ է: Դրան փայլուն ապացույց է ֆլասարաբություն դեմ ուղղված պայքարի պրակտիկան: Այժմ բոլորի համար արդեն զարգ է, վոր «ոքսիկտիվ» գիտություն քողի ներքո ֆլասարարները ձգտում են ինքն իր սոցիալիստական շինարարությունը: Կոնդրատեները, Գրոմանները, Գինդբուրգները, Ռադիկները, Ռուբինները քողարկված ձևով կատաղի դասակարգային պայքար ելին մղում, ինտերվենցիա են ին պատրաստում:

Կուսակցությունը պահանջում է, վոր գիտությունն ու փիլիսոփայությունը, գրականությունն ու արվեստը, մանկավարժությունն ու տեխնիկական ակտիվ մասնակցություն ունենան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում բանվոր դասակարգի առաջ գրված խնդիրների իրագործմանը, ակտիվ պայքարի կուսակցության գլխավոր գծի իրականացման համար. կուսակցությունը անխղելի կապ է պահանջում սոցիալիստական շինարարության թեորիայի և պրակտիկայի միջև, վորովհետև թեորիան անառարկապես է դառնում, յեթե նա չի շաղկապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան կույր և դառնում, յեթե նա իր ճանապարհը չի լուսավորում հեղափոխական թեորիայով» (Ստալին — Վենինիդովի հիմունքների մասին), վորովհետև թեորիան «պրակտիկաներին տալիս է կոզմոպոլիտական ուժ,

հեռանկարի պարզութիւն, աշխատանքի վստահութիւն, մեր գործի հաղթանակման հաւատ (Ստալին):

Հենց այս բոլոր պայմանների ամբողջութիւնն էլ բնորոշում է կուսակցականութեան սկզբունքը կուսուրբայի բնագծով: Բայց, վորը պրոլետարիատն ունի կուսակցութեանը հակադրում են բուրժուական «ազատութեանը»:

Բուրժուական ստիպած է թաղանթ, վարագուրել էր գործադուլներին բուն իմաստը, վորովհետեւ նրանք պաշտպանում են մի բուրժուական գործողների շահերը, դրա համար էլ նա սահմանափակումների, ճնշման, կաշառքի վտանգ գլուխ կեղծ սխառնում հրամայում է իբրեւ ազատութիւն: Իսկ պրոլետարիատը, գործելով բովանդակ աշխատավոր մարդկութեան շահերի համար, վոչ մի քողարկման կարիք չի գտնում. նա վճռակամորեն պահանջում է բոլոր նրանցից, ովքեր աշխատում են կուսուրբայի ֆրոնտում, անպայման ծառայել պրոլետարիատի շահերին, վորը նշանակում է միաժամանակ ծառայել վոյշ աշխատավոր մարդկութեանը, վորի շահերը ներկայացնում է պրոլետարիատը:

Հարցեր ինքնասուզման համար

1. Ի՞նչ է «նյութական» կուսուրբան է Ի՞նչ է «հոգևոր» կուսուրբան:

2. Ինչո՞ւն է արտահայտվում կուսուրբայի ազդեցութիւնը նշանակաւ կյանքի վրա:

3. Ինչո՞ւ բուրժուականի դասակարգային կուսուրբան թշնամի է մտաբերելիքին:

4. Ի՞նչպէս է բուրժուականի ոգտագործում դասակարգային կուսուրբան շահագործման նպատակների համար:

5. Հնարավո՞ր է արդե՞ք պրոլետարական կուսուրբայի զարգացումը բուրժուականի տիրապետութեան ժամանակ:

6. Ինչո՞ւն է արտահայտվում այն ժառանգութիւնը, վոր ստանում է պրոլետարական կուսուրբան բուրժուական կուսուրբայից:

7. Ի՞նչպէս պետք է հասկանալ կուսուրբական հեղափոխութեան լոզունգը:

8. Ինչո՞ւ են արտահայտվում ալ և «ձախ» թեքումները ազգային հարցում:

9. Ինչո՞ւն էին պրոլետարիատի սխալները:

10. Ինչո՞ւն են պրոլետարական կուսուրբայի հակառակորդների (սոցիալիստական կուսուրբայի կողմնակիցների սխալները):

11. Ինչո՞ւ է անցման շրջանի կուսուրբայի մասին Տրոցկու «Թեորիան» հաղված արդիւնքի հետ:

12. Ի՞նչ է նշանակում ազգային կուսուրբայի լոզունգը բուրժուականի տիրապետութեան որոշ:

13. Ի՞նչ է նշանակում ձեռք ազգային և բովանդակութեամբ սոցիալիստական կուսուրբա:

14. Ինչո՞ւն է արտահայտվում մեծագոյնական շովինիզմի թեքումը ազգային-կուսուրբական շինարարութեան հարցերում:

15. Ինչո՞ւն է արտահայտվում տեղական նացիոնալիզմի թեքումը:

16. Ի՞նչ գեր է խաղում պրոլետարիատը ազգային կուսուրբական շինարարութեան հարցերում:

17. Ինչո՞ւ բուրժուազիան պետք է քղաքիլի իր բուն դասակարգային դեմքը:

18. Ի՞նչ նշանակություն ունի սոցիալիստական շինարարության համար թեորիայի և պրակտիկայի կապը:

Սեուզողական հարցեր

1. Ինչո՞ւն է արտահայտված բուրժուական հասարակության կուլտուրայի դասակարգային բնույթը:

2. Վորո՞նք են դասակարգային պրոլետարական կուլտուրայի հիմնական գծերը:

3. Ինչո՞վ է ընկ. Տոմսկու տեսակետը տարբերվում լենինյան տեսակետից կուլտուրայի հարցերում:

4. Ի՞նչ պիսին է կուսակցության գլխի աղգային կուլտուրական շինարարության խնդրում:

5. Ինչո՞ւն է բալլերիկյան կուսակցության ելույթները կուլտուրայի հարցերում:

19

1

3438